

Մհեր Ա. Հարությունյան  
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ,  
«Կաճառ» գիտական կենտրոն  
mherharout@gmail.com  
ORCID: 0000-0002-0719-8860

## **ԱՐՏԱՇԵՍ ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ**

Մաս առաջին: Հայ գրքի ականավոր մատենագետը



### Ամփոփում

Սույն հոդվածը հայ գրքի ու մամուլի պատմության ճանաչված հետազոտող Արտաշես Տեր-Խաչատուրյանի գիտական ժառանգության համակողմանի քննությունը նվիրված ծավալուն ուսումնասիրության առաջին մասն է: Հետազոտության առանցքում է հեղինակի «Հայ գրքի մատենագիտական գործեր» աշխատությունը, որը լուրջ ներդրում է հայ տպագրական մշակույթի հետազոտության ասպարեզում:

Ողջ գիտակից կյանքը Բեյրութի ու Հալեպի գիտակրթական հաստատություններում անցկացրած Արտաշես Տեր-Խաչատուրյանը հայտնի էր որպես ուսուցիչ ու խմբագիր, բայց Հայաստանի ու արտերկրի հայագետների համար նա նախ և առաջ անառարկելի հեղինակություն էր հայ գրքի ու մամուլի պատմության ուսումնասիրության ասպարեզում: Ուստի Տեր-Խաչատուրյանի աշխատություններն ամփոփող ծավալուն երկհատորյակի հրապարակումից հետո նրա գիտական ժառանգությունը մասնագիտորեն գնահատվելու ու արժևորվելու կարիք ունի:

Հողվածի նպատակը հայ գրքի պատմության և գրքագիտության բնագավառներում Տեր-Խաչատուրյանի գիտական հետազոտությունների փաստագրական, կառուցվածքային և տեսամեթոդաբանական նշանակության քննությունն է՝ ժամանակակից հայագիտության և միջգիտակարգային խոսույթի շրջանակներում: Իրականացվող հետազոտությունը հենված է համալիր մեթոդաբանական մոտեցման վրա, որ ենթադրում է աղբյուրագիտական քննություն, համադրական վերլուծություն, կառուցվածքային դիտարկում ու տեսական վերաիմաստավորում: Հատուկ ուշադրություն է դարձվում այն իրողությանը, որ Տեր-Խաչատուրյանի համար մատենագիտությունը ոչ թե օժանդակ գործիք էր, այլ գիտելիք կազմակերպելու ինքնուրույն համակարգ:

Հողվածում բացահայտվում է Տեր-Խաչատուրյանի մեթոդաբանական դիրքորոշումը, որը հենված է փաստի առաջնայնության, ժամանակագրական ճշգրտության և գիտական անաչառության սկզբունքների վրա: Այս մոտեցումը թույլ է տվել մատենագիտության առարկան վերածելու պատմամշակութային վերլուծության արդյունավետ գործիքի: Տեր-Խաչատուրյանի ժառանգությունն իր ներսում կառուցված (իմպլիցիտ) տեսամեթոդաբանական համակարգ է, որը համադրելի է մշակութային հիշողության, գրքի պատմության և հանրային խոսույթի ժամանակակից տեսությունների հետ: Նրա համար հայ գիրքը ազգային հիշողության նյութական կրիչ է, իսկ մատենագիտությունը՝ այդ հիշողության կազմակերպման և պահպանման մեխանիզմ:

Այս հաստատումները թույլ են տալիս եզրակացնելու, որ Տեր-Խաչատուրյանի մատենագիտական ժառանգությունը հայ գրքագիտության համար հիմնադիր-կարգավորող նշանակության համակարգ է, ուստի ոչ միայն արդիական է, այլև պահպանում է իր գործառնական արդյունավետությունը ժամանակակից հայագիտության համար՝ նոր սերնդին հնարավորություն տալով զարգացնելու ականավոր մատենագետի տեսական և մեթոդաբանական մոտեցումները:

**Քանալի բառեր** – հայ մատենագիտություն, գրքագիտություն, տպագիր մշակույթի պատմություն, աղբյուրագիտություն, մշակութային հիշողություն, մատենագիտական մեթոդաբանություն, գիտելիքի համակարգում, ժամանակագրական ճշգրտություն, գրքի սոցիոմշակութային գործառույթներ, իմպլիցիտ տեսամեթոդաբանական համակարգ:

**ARTASHES TER-KHACHATURYAN: SCHOLARLY LEGACY**

**Part One: An Eminent Bibliographer of the Armenian Book**

**Abstract**

This article is the first part of a study devoted to a comprehensive analysis of the scholarly legacy of the renowned researcher of the history of the Armenian book and press, Artashes Ter-Khachaturyan. The focus of the research is his work “Bibliographical Studies of the Armenian Book,” which is regarded as a substantial contribution to the study of Armenian print culture.

Having spent most of his life within intellectual and educational milieu of Beirut and Aleppo, Artashes Ter-Khachaturyan is known Armenian intellectual community primarily as a teacher and editor, while for a narrower circle of Armenologists in Armenia and abroad he is regarded as an undisputed authority in the study of the history of the Armenian book and press. In this context, following the publication of a comprehensive two-volume edition that consolidates his works, Ter-Khachaturyan’s scholarly legacy calls for thorough professional evaluation and reinterpretation.

The aim of this article is to analyze the empirical, structural, and theoretical–methodological significance of Ter-Khachaturyan’s scholarly research in the fields of the history of the Armenian book and bibliography, within the framework of contemporary Armenological and interdisciplinary academic discourse. The study is based on a comprehensive methodological approach that incorporates source criticism, comparative analysis, structural examination, and theoretical reinterpretation. Particular attention is paid to the fact that, for Ter-Khachaturyan, bibliography functions not as an auxiliary tool but as an autonomous system for the organization of knowledge.

The article elucidates Ter-Khachaturyan’s methodological position, grounded in the principles of the primacy of fact, chronological accuracy, and scholarly objectivity. This approach made it possible to overcome the mechanistic understanding of bibliography and to transform it into an effective instrument of historical and cultural analysis. Ter-Khachaturyan’s legacy constitutes an implicitly structured theoretical–methodological system, comparable to contemporary theories of cultural memory, book history, and public discourse. In his interpretation, the Armenian book functions as a material carrier of national memory, while bibliography serves as a mechanism for its organization and preservation.

These considerations allow one to conclude that the bibliographical legacy of Artashes Ter-Khachaturyan constitutes a system of foundational and normatively organizing significance for Armenian bibliography; consequently, it continues to retain its relevance and functional effectiveness for contemporary Armenian studies, providing a new generation of scholars with the opportunity to further develop the theoretical and methodological approaches of this outstanding bibliographer.

**Key words** - Armenian bibliography, book studies, history of print culture, source studies, cultural memory, bibliographical methodology, systematization of knowledge, chronological accuracy, socio-cultural functions of the book, implicit theoretical and methodological system.

**Мгер А. Арутюнян**

## **АРТАШЕС ТЕР-ХАЧАТУРЯН: НАУЧНОЕ НАСЛЕДИЕ**

Часть первая: Выдающийся библиограф армянской книги

### **Резюме**

Настоящая статья представляет собой первую часть исследования, посвящённого всестороннему анализу научного наследия признанного исследователя истории армянской книги и прессы Арташеса Тер-Хачатуряна. В центре внимания находится его труд «Библиографические труды по армянской книге», рассматриваемый как весомый вклад в изучение армянской печатной культуры.

Проведя свою сознательную жизнь в армянских научно-образовательных учреждениях Бейрута и Алеппо, Арташес Тер-Хачатурян стал известным прежде всего как педагог и редактор, тогда как для узкого круга арменоведов в Армении и за её пределами он является непререкаемым авторитетом в области изучения истории армянской книги и прессы. В этой связи, после публикации обширного двухтомного издания, обобщающего его труды, научное наследие Тер-Хачатуряна нуждается в профессиональной оценке и переосмыслении.

Целью статьи является анализ фактографического, структурного и теоретико-методологического значения научных исследований Тер-Хачатуряна в области истории армянской книги и книговедения в контексте современного арменоведческого и междисциплинарного научного дискурса. Настоящее исследование основано на комплексном методологическом подходе, включающем источниковедческую критику, сравнительный анализ, структурное рассмотрение и теоретическую реинтерпретацию. Особое внимание

уделяется тому обстоятельству, что для Тер-Хачатуряна библиография выступает не как вспомогательный инструмент, а как самостоятельная система организации знания.

В статье раскрывается методологическая позиция Тер-Хачатуряна, основанная на принципах приоритета факта, хронологической точности и научной объективности. Данный подход позволил преодолеть механическое понимание предмета библиографии и превратить её в эффективный инструмент историко-культурного анализа. Наследие Тер-Хачатуряна представляет собой имплицитно выстроенную теоретико-методологическую систему, соотносимую с современными теориями культурной памяти, истории книги и публичного дискурса. В его интерпретации армянская книга выступает как материальный носитель национальной памяти, а библиография — как механизм её организации и сохранения.

Данные положения позволяют заключить, что библиографическое наследие Арташеса Тер-Хачатуряна представляет собой систему основополагающего и нормативно-организующего значения для армянской библиографии; вследствие этого оно продолжает сохранять свою актуальность и функциональную эффективность и для современной армяноведческой науки, предоставляя новому поколению исследователей возможность развивать теоретические и методологические подходы выдающегося библиографа.

**Ключевые слова** — армянская библиография, книговедение, история печатной культуры, источниковедение, культурная память, библиографическая методология, систематизация знания, хронологическая точность, социокультурные функции книги, имплицитная теоретико-методологическая система.

## Մուտք

Թվայնացման դարաշրջանում, երբ գիտական շրջանառության մեջ են մտնում նոր աղբյուրներ, իսկ հին հավաքածուները վերաիմաստավորվում են, առանձնահատուկ նշանակություն է ստանում այն հեղինակների գիտական ժառանգության վերարժևորումը, որոնք հենված են աղբյուրների բարեխիղճ հետազոտության և տվյալները համակարգայնորեն կազմակերպելու վրա: Ուստի Արտաշես Տեր-Խաչատուրյանի «Հայ գրքի մատենագիտական գործեր» (Տեր-Խաչատուրեան 2014ա) և «Հայ մամուլի մատենագիտական գործեր» (Տեր-Խաչատուրեան 2014բ) հետմահու հրատարակված հիմնարար աշխատություններն այն **մե-**

**տաադրյուրագիտական հենքն** են, որ թույլ է տալիս ոչ միայն փաստագրելու հայ գրքի և մամուլի պատմությունը, այլև սահմանելու դրանց հետագա ուսումնասիրության մեթոդաբանական չափորոշիչները:

**Երկու մասից** բաղկացած սույն ուսումնասիրության նպատակը Արտաշես Տեր-Խաչատուրյանի մատենագիտական ժառանգության իմաստավորումն է որպես հայ գրքի և մամուլի պատմության համակարգային գիտական հենք: Այս նպատակի իրականացման համար առաջադրվում են հետևյալ խնդիրները. ա) վերլուծել նրա «Հայ գրքի մատենագիտական գործեր» և «Հայ մամուլի մատենագիտական գործեր» ժողովածուների կառուցվածքային և բովանդակային առանձնահատկությունները, բ) բացահայտել կիրառված տեսամեթոդաբանական սկզբունքները (փաստի առաջնայնություն, ժամանակագրական ճշգրտություն, դասակարգման համակարգայնություն), գ) գնահատել այդ աշխատությունների դերը հայագիտական գիտելիքի ինստիտուցիոնալացման գործընթացում, դ) համադրել Տեր-Խաչատուրյանի մոտեցումները ժամանակակից գրքագիտական և մշակութաբանական տեսությունների հետ, ե) ցույց տալ նրա ժառանգության շարունակական ազդեցությունը արդի հետազոտական ուղղությունների վրա:

Ուսումնասիրությունը ժամանակակից գրքագիտության և մշակութաբանության տեսական շրջանակում է, որտեղ գիրքն ու մամուլը ոչ միայն տեղեկատվության կրիչներ, այլև **սոցիալ-մշակութային համակարգեր** են դիտարկվում:

Այս մոտեցումը համահունչ է Յան Ասմանի մշակութային հիշողության տեսությանը (Assmann 2008, Assmann 2011), ըստ որի՝ գրավոր մշակութաբանության հիշողության ինստիտուցիոնալացված ձև է, ինչպես նաև Ալին Էրլի (Erlil and Ansgar, eds. 2008, Erlil 2011) մշակութային փոխանցման մոդելների տեսությանը, որտեղ տեքստերը դիտարկվում են որպես միջնորդավորված հիշողության կրիչներ:

Նույնպես կարևոր են հանրային ոլորտին վերաբերող Յուրգեն Հաբերմասի տեսությունը (Habermas 1989, Habermas 1996), որի շրջանակում տպագիր մամուլը հասարակական մտքի ձևավորման և գաղափարական հաղորդակցության հարթակ է դիտարկվում: Այս տեսական համատեքստը հնարավորություն է տալիս Տեր-Խաչատուրյանի մատենագիտական աշխատանքները վերահիմաստավորելու ոչ միայն տվյալների համակարգում, այլև դիտարկելու որպես **գիտելիքի կառուցման և հանրային խոսույթի նյութական հիմք**:

Իսկ հիմնարար հայագիտական ուսումնասիրությունների դաշտում Տեր-Խաչատուրյանի գործունեությունը կարելի է համադրել հայ գրքագիտության դասական ավանդույթի հետ, որտեղ մատենագիտությունը ձևավորվել է որպես պատմագիտական հետազոտության հիմքային գործիք (Զարբհանալեան 1895; Զարդարեան 1910, 1911, 1912; Լեօ 1901, 1902; Ղազիկեան 1909, 1912; Թէոդիկ 1912, 2012; Լևոնյան 1958, 2012; Իշխանյան 1977, 1988, 2012; Անասեան, խմբ. 1963; Աբրահամյան 1959, 2012; Սուքիասյան 2013; հմմտ.՝ Այվազյան, խմբ. 2015, 311):

Ներկա հետազոտությունը կառուցված է բազմաշերտ մեթոդաբանական մոտեցումով, որը ներառում է. ա) **աղբյուրագիտական քննությունը**՝ Տեր-Խաչատուրյանի աշխատությունների ներքին կառուցվածքի և տվյալների ստուգման մեխանիզմների վերլուծությամբ, բ) **համադրական մեթոդը**՝ նրա մոտեցումները ժամանակակից գրքագիտական և մշակութաբանական տեսությունների հետ համեմատելու համար, գ) **պատմահամակարգային վերլուծությունը**՝ հայ գրքի և մամուլի զարգացման համատեքստում, դ) **դիսկուրսիվ վերլուծությունը**՝ գիտական լեզվի և ենթատեքստային տեսական շերտերի բացահայտման նպատակով:

Մեթոդաբանական մոտեցումների նման համադրությունը թույլ է տալիս հաղթահարելու զուտ նկարագրական մոտեցումը և Տեր-Խաչատուրյանի մտավոր ժառանգությունը ներկայացնել որպես տեսականորեն վերաիմաստավորվող գիտական համակարգ:

Հետազոտության հիմնական **աղբյուրագիտական հենքն են** Տեր-Խաչատուրյանի ժողովածուները, որոնք ներառում են բազմամյա արխիվային, գրադարանային և հավաքչական աշխատանքի արդյունքները: Այդ ժողովածուների պարունակած վիթխարի նյութը լրացնում է հայ գրքագիտության և մամուլի պատմության վերաբերյալ հայերեն<sup>1</sup> և օտարալեզու<sup>2</sup> ուսումնասիրությունները, տեսական աշխատությունները մշակութային հիշողության, գրքի պատմության<sup>3</sup> և հաղորդակցության տե-

<sup>1</sup> Հ.Յ. Ղաշնակցուքին եւ Հայկական Սովետական Հանրագիտարան (Տեր-Խաչատուրեան 2014ա 367-395):

<sup>2</sup> Հայ գրականությունը օտար լեզուներով (Գիտական-քննական գրախօսական)-The Armenian Literature in Foreign Languages (Տեր-Խաչատուրեան 2014ա 315-366):

<sup>3</sup> Պատմություն հայ տպագրութեան [Թռուցիկ ակնարկ] (Տեր-Խաչատուրեան 2014ա 9-24), Հայ տպագրութեան նախակարապետը՝ Մեղապարտ Յակոբ (Տեր-Խաչատուրեան 2014ա 25-52), Մեղապարտ Յակոբի Սաղմոսարանի հարցը (Տեր-Խաչատուրեան 2014ա 53-62):

սության ոլորտներում, ինչպես նաև հայագիտության գիտական ավանդույթի շրջանակում ձևավորված մատենագիտական<sup>4</sup> փորձը:

Այսպիսով, սույն հետազոտությունը նպատակ ունի Արտաշես Տեր-Խաչատուրյանի մատենագիտական ժառանգությունը ներկայացնելու ոչ միայն ժամանակի գիտական արդյունք, այլև **համակարգային գիտական հենք**, որը ազդում է հայ գրքագիտության, մամուլի պատմության և մշակութային ուսումնասիրությունների արդի զարգացումների վրա: Այս դիտանկյունից նրա աշխատանքները գիտելիքի կազմակերպման այնպիսի մոդել են, որը միավորում է փաստագրական խստությունը և տեսական վերախնամատավորման ներուժը՝ ապահովելով հետագա հետազոտությունների կայուն հիմքը:

Նյութի ներքին տրամաբանությունը և հետազոտության առաջադրած խնդիրների բազմաշերտ բնույթը նկատի ունենալով՝ նպատակահարմար է ուսումնասիրությունը կառուցել փուլային սկզբունքով՝ ապահովելով վերլուծության պատճառահետևանքային հաջորդականությունը և տեսամեթոդաբանական ամբողջականությունը: Այս համատեքստում աշխատանքը բաժանվում է երկու փոխկապակցված, սակայն վերլուծական առումով ինքնուրույն հատվածների. նախ **քննության է առնվում հայ գրքային ժառանգության մատենագիտական համակարգման տերխաչատուրյանական մոտեցումը՝ որպես աղբյուրագիտական հիմքի ձևավորման գործընթաց, ապա՝ հայ պարբերական մամուլի քարտեզագրման նրա գիտական մոդելը՝ որպես այդ հիմքի ընդլայնում հանրային դիսկուրսի և մշակութային հիշողության դաշտում:**

Այսպիսի կառուցվածքը պայմանավորված է ոչ միայն նյութի ծավալով, այլև այն հանգամանքով, որ գրքի և մամուլի մատենագիտական համակարգումը Տեր-Խաչատուրյանի գիտական ծրագրում դրսևորվում է որպես հաջորդական փուլերով իրականացվող միասնական ձանաչողական նախագիծ: Այսինքն՝ գրքային ժառանգության փաստագրական և դասակարգիչ հիմքի ձևավորումը տրամաբանորեն հանգեցնում է մամուլի՝ որպես զարգացող հաղորդակցական համակարգի, ավելի բարդ և բազմաշերտ քարտեզագրմանը: Ուստի մեր կողմից ընտրված բաժանումը ոչ թե ձևական է, այլ բխում է ուսումնասիրվող նյութի ներքին զարգացման օրինաչափություններից և հնարավորություն է տալիս առավել

<sup>4</sup> Մատենագիտութիւն Ռուբէն Զարդարեանի (Տեր-Խաչատուրեան 2014ա 63-136), Դանիէլ Վարուժանի մատենագիտութիւն (Տեր-Խաչատուրեան 2014ա 137 -196), Մատենագիտութիւն Լեւոն Շանթի(Տեր-Խաչատուրեան 2014ա 197 -246), Շահան Պէրպէրեան (1891-1956) –կենսագրութիւն եւ մատենագիտութիւն (Տեր-Խաչատուրեան 2014ա 247-314):

Վեմ համահայկական հանդես, ժԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

հատակորեն բացահայտելու ինչպես հեղինակի մեթոդաբանական սկզբունքների կայունությունը, այնպես էլ դրանց կիրառական դրսևորումների փոփոխականությունը տարբեր աղբյուրագիտական միջավայրերում:

## 1. Տեր-Խաչատուրյանի գիտական գործունեությունը՝ մատենագիտական դպրոցի ձևավորման հենք

Արտաշես Տեր-Խաչատուրյանի (1931–1993) կենսագրությունը (Յովհաննէսեան 2008) և գիտական գործունեության ուղին (Ղազարյան 2023) ոչ միայն անհատ գիտնականի գործունեության, այլև որոշակի գիտակարգի ինստիտուցիոնալ կայացման վառ օրինակներ են: Նրա արգասավոր աշխատանքը ծավալվել է սփյուռքյան գիտակրթական միջավայրում, որտեղ բացակայում էին կայուն ակադեմիական ենթակառուցվածքները, սակայն այդ դժվարին պայմաններում նրան հաջողվել է ձևավորել այնպիսի աղբյուրագիտական և մատենագիտական հենք, որը պահպանել է իր գործառնական նշանակությունը նաև մեր օրերում:

Ապագա մատենագետ Արտաշես Տեր-Խաչատուրյանի մասնագիտական ինքնությունը ձևավորվել է հայ բանասիրության և գրքագիտության այն ավանդույթների ազդեցությամբ, որոնցում գերակայում էր աղբյուրի նկատմամբ խիստ, փաստակենտրոն վերաբերմունքը: Ուստի նրա գիտական դիմագիծը կառուցված է երեք փոխկապակցված հարթությունների վրա՝ բանասիրական պատրաստվածություն, մատենագիտական մեթոդաբանություն, մշակութաբանական լայն հորիզոն:

Այս համադրությունն ապահովել է Տեր-Խաչատուրյանի աշխատությունների կառուցվածքային ամբողջականությունն ու վերլուծական խորությունը: Մատենագիտությունը նրա համար երբեք չի սահմանափակվել գրացուցակային նկարագրությամբ. այն ընկալվել է իբրև գիտական քննության ձև, որի միջոցով հնարավոր է վերակազմել մշակութային գործընթացները:

Տեր-Խաչատուրյանի գործունեության առանցքն են հայ տպագրության պատմությունը, հնատիպ և վաղ շրջանի գրքի ուսումնասիրությունը, որոնք միավորվում են միասնական գիտական ծրագրի մեջ՝ ուղղված հայկական տպագիր մշակույթի համակարգային քարտեզագրմանը:

Հատկանշական է, որ նրա աշխատանքները հիմնված են երկարամյա արխիվային որոնումների, գրադարանային ֆոնդերի մանրակրկիտ քննության և փաստական նյութի խիստ դասակարգման վրա: Այս գործընթացը պահանջում էր ոչ միայն գիտական հմտություններ, այլև

կազմակերպական ջանքեր՝ հաշվի առնելով բազմաթիվ աղբյուրների խոցելի, իսկ երբեմն նաև վտանգված վիճակը:

Նրա քննախույզ հայացքից չեն վրիպել այնպիսի ոլորտներ, ինչպիսիք են հայ մշակութային գանձերի փրկության և պահպանման հիմնահարցերը (Տէր-Խաչատուրեան 1980գ), հայոց լեզվի ուղղագրությունը (Տէր-Խաչատուրեան 1962, Տէր-Խաչատուրեան 1970), բառարանագիտությունը (Հայոց լեզուի նոր բառարան 1992, Հայոց լեզուի նոր բառարան 1968), ժողովրդական երգերի հանրահռչակման խնդիրը (Տարօն 1950, Քասունի, խմբ. 1973), անվանի մտավորականների կենսագործունեության արժեվորումը մահագրությունների (Տէր-Խաչատուրեան 1982, Տէր-Խաչատուրեան 1984 ա) և գրախոսությունների շարքերը և այլն (Տէր-Խաչատուրեան 1980 բ, Տէր-Խաչատուրեան 1984 բ):

Տեր-Խաչատուրյանի գիտական մոտեցումը բնութագրվում է որպես փաստակենտրոն և ժամանակագրական-համակարգային: Նրա համար առաջնային են տվյալների ճշգրտությունը, աղբյուրների փոխստուգումը և ժամանակագրական հստակությունը: Այս մեթոդաբանությունը կառուցված է երեք հիմնարար սկզբունքների վրա՝ ա) գիտական անաչառություն, բ) ժամանակագրական ճշգրտություն, գ) դասակարգման համակարգայնություն:

Տեր-Խաչատուրյանի գիտական գործունեության անբաժանելի մասն էր հազվագյուտ տպագիր նյութերի որոնման, համակարգման և գիտական շրջանառության մեջ ներգրավման խնդիրը: Նրա անձնական հավաքածուն, որը Հայաստանի ազգային գրադարանում (Ազգային գրադարանում կգործի Արտաշես Տեր-Խաչատուրյանի անվան անհատական հավաքածուն, 2020) հետագայում ձևավորեց առանձին ֆոնդ, հավաստում է, որ նրա համար մատենագիտությունը նաև նյութական մշակութային ժառանգության պահպանման և գալիք սերունդներին ավանդելու գործ էր:

Այս հանգամանքը պետք է դիտարկել ոչ թե որպես կենսագրական դրվագ, այլ գիտական աշխատանքի կառուցվածքային պայման: Առաջնային աղբյուրների հետ անմիջական աշխատանքը նրան հնարավորություն է տվել ձևավորելու տվյալների այնպիսի բազա, որը հետագայում դարձել է հայագիտության կարևորագույն ռեսուրսներից մեկը:

## 2. Գիտական ժառանգության կառուցվածքը

Տեր-Խաչատուրյանի գիտական ժառանգությունը կարելի է դիտարկել երեք փոխկապակցված մակարդակներով՝ **փաստագրական՝**

Վեմ համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

ընդգրկելով հավաքագրված և համակարգված նյութերի լայն շերտ, **մեթոդաբանական**՝ ներկայացնելով աղբյուրագիտական աշխատանքի և դասակարգման օրինակելի մոդել, **ինստիտուցիոնալ**՝ ձևավորելով հայ գրքագիտության և մամուլի պատմության ուսումնասիրման հիմքային կառուցվածք:

Այս բազմաշերտությունը նրա գործունեությանը հաղորդում է ոչ միայն ժամանակակից, այլև երկարաժամկետ գիտական արժեք՝ այն դարձնելով կիրառելի տարբեր հետազոտական համատեքստերում:

Քննական դիտանկյունից կարելի է արձանագրել, որ Տեր-Խաչատուրյանի գիտական նախապատվությունը հիմնականում կենտրոնացած է փաստագրության մեջ՝ սահմանափակելով տեսական ընդհանրացումների ծավալը: Սակայն հենց այս խստությունն է ապահովում նրա աշխատանքի կայունությունը և գիտական հավաստիությունը: Նման գործունեությունը պետք է դիտարկել որպես **հիմք ստեղծող** գիտական համակարգի ձևավորում, որը ապահովում է հետագա վերլուծությունների համար անհրաժեշտ աղբյուրագիտական ենթակառուցվածքը: Բայց Տեր-Խաչատուրյանի մատենագիտական ժառանգության քննությունը ցույց է տալիս, որ նրա գործունեությունը տվյալներ հավաքելով և դասակարգելով չի սահմանափակվել: Այն հայկական տպագիր մշակույթի համակարգային ճանաչմանն ուղղված ամբողջական գիտական մեթոդաբանություն է: **Մատենագիտությունը նրա մոտ դարձել է գիտելիքի կառուցման ձև՝ համադրելով աղբյուրագիտական խստությունը, համակարգային մտածողությունը և մշակութաբանական ներքին տրամաբանությունը:**

Տեր-Խաչատուրյանի մոտեցման առանցքային առանձնահատկությունն այն է, որ մատենագիտությունը դուրս է բերվում օժանդակ գիտակարգի ավանդական սահմանումից և վերածվում է ինքնուրույն ճանաչողական համակարգի: Եթե դասական գրքագիտական ավանդույթում մատենագիտությունը հաճախ որպես «գիտության ծառայողական ենթակառուցվածք» է ընկալվել, ապա նրա աշխատություններում այն ձեռք է բերել **էպիստեմոլոգիական (իմացաբանական) ինքնավարություն:**

Բառերի հիմքում ընկած «մատենագետ» բառը, ըստ Հայկազյան լեզվի նոր բառագրքի, նշանակում է «գիտակ մատենից և դպրութեանց» (Աւետիքեան, Սիւրմէլեան, Աւգերեան 1837 213), իսկ հետագա բառարաններում տրվում են հետևյալ սահմանումները. 1) Գրքերի և այլ հրատարակությունների գիտական որևէ հատկանիշով ու որոշակի սկզբունքով համակարգի վերածված թվարկումն ու նկարագրությունը, 2) Որևէ գիտութեան

յան՝ գիտակարգի, գիտական խնդրի վերաբերող գրականության ցանկ, 3) Մատենագիտական ցանկեր կազմելու եղանակներին ու մեթոդներին վերաբերող գիտելիքների ամբողջությունը որպես բիբլիոգրաֆիա (Սուքիասյան 2009 735):

Այս իմաստով մատենագիտական ցանկը, Տեր-Խաչատուրյանի շնորհիվ, այլևս տվյալների մեխանիկական համախումբ չէ, այլ աղբյուրների քննադատական ընտրության արդյունք, գիտելիքի կառուցվածքային կազմակերպման ձև, մինչև իսկ՝ պատմական իրականության վերակազմության գործիք: Լևոն Շանթի գործերի մատենագիտության «Երկու խօսք»-ում Արտաշես Տեր-Խաչատուրյանը գրել է. «Ուրեմն՝ մատենագիտական աշխատանք կատարողը ի՛նք՝ տաժանելի պարտականութիւնը պիտի վերցնէ մամուլը էջ առ էջ թերթատելով գտնել իրեն անհրաժեշտ նիւթը» (Տեր-Խաչատուրյան, 2014ա, 199):

Այս մոտեցումը համահունչ է ժամանակակից գրքագիտության այն ուղղություններին, որոնք գիրքն ու տպագիր արտադրանքը դիտարկում են «գիտելիքի նյութական համակարգեր»՝ ներառված սոցիալ-մշակութային շրջանառության մեջ:

Տեր-Խաչատուրյանի գիտական մեթոդաբանությունը կառուցված է երեք առանցքային սկզբունքների վրա, որոնք գործում են ոչ թե առանձին, այլ փոխկապակցված:

ա) Փաստի առաջնայնություն (**Primacy of the empirical fact**<sup>5</sup>): **Հետազոտական գործընթացում առաջնայինը փաստն է՝ ստուգված, համադրված և աղբյուրագիտական քննություն անցած տվյալը:** Այս սկզբունքը Ա. Տեր-Խաչատուրյանի գրչի տակ դարձել է բազմաթիվ աղբյուրների համադրության, հակասական տվյալների քննադատական վերլուծության, նախորդ մատենագիտական սխալների ուղղման մեկնակետ:

Այսպիսով, մատենագիտությունը Ա. Տեր-Խաչատուրյանի աշխատանոցում վերածվում է **սրբագրական (կոռեկտիվ) գիտության**<sup>6</sup>:

<sup>5</sup> **Փորձնական (եմպիրիկ) փաստի առաջնայնություն** կամ **գերակայություն:** Այս փիլիսոփայական կամ գիտական հասկացությունն այստեղ օգտագործված է այն նշանակությամբ ու իմաստով, որ փորձով կամ դիտարկումով հաստատված փաստերը (empirical facts) ավելի բարձր են դասվում կամ ավելի կարևոր են, քան տեսական կամ ապրիորի (նախափորձնական) պնդումները:

<sup>6</sup> Հայերենի «սրբագրել/սրբագրություն/սրբագրական» եզրույթը բավականաչափ կայացած է, ընդունված ու հասկանալի: Իսկ անհ **corrective discipline** օտար եզրը ոչ միայն արձանագրում է, այլև շտկում է գիտական շրջանառության մեջ առկա սխալները:

բ) Ժամանակագրական ճշգրտություն: **Ժամանակագրությունը Տեր-Խաչատուրյանի համար ոչ միայն դասակարգման տեխնիկական միջոց է, այլ պատմագիտական վերլուծության առանցք:**

Ժամանակագրական ճշգրտության միջոցով Ա. Տեր-Խաչատուրյանը վերականգնել է գրքային արտադրության բարդ հոլովույթի դինամիկան, բացահայտել է տպագրական կենտրոնների զարգացումը, հնարավոր է դարձրել գաղափարական հոսքերի ժամանակային տեղորոշումը:

Խաչատուրյանի այս մտտեցումը մատենագիտությունը մտտեցրել է պատմական գիտությանը՝ դարձնելով այն **ժամանակային կառուցվածքների վերլուծության գործիք:**

գ) Գիտական անաչառություն: **Ա. Տեր-Խաչատուրյանը հետևողականորեն պահպանում է գիտական անաչառության սկզբունքը՝ ներառելով տարբեր գաղափարական ուղղությունների, աշխարհագրական տարածքների և մշակութային միջավայրերի նյութեր:**

Այս դիրքորոշումը հատկապես կարևոր է հայ մամուլի և գրքի բազմակենտրոն բնույթի պայմաններում, որտեղ նյութի ընտրությունը կարող էր ենթարկվել գաղափարական սահմանափակումների: Նրա մոտ, սակայն, մեր կարծիքով՝ գերակայում է **համակարգային ամբողջականության սկզբունքը:**

Հատկանշական է, որ Ա. Տեր-Խաչատուրյանի մատենագիտական ցանկերը կառուցված են հստակ գիտական կառուցակարգով, որը կարելի է անվանել **միկրոմակարդակի տվյալների ստանդարտացում:** Յուրաքանչյուր միավոր, ինչպես ընդունված է, ներառում է՝ 1) վերնագրային ամբողջականություն, 2) հրատարակչական տվյալների ճշգրտում (վայր, թվական, տպարան), 3) խմբագրական կազմի նշում, 4) հնարավոր տպաքանակների կամ վերահրատարակությունների բացահայտում, 5) ծանոթագրական մեկնաբանություններ:

Պահպանելով այս կառուցվածքը՝ Ա. Տեր-Խաչատուրյանն ապահովում է տվյալների համադրելիությունը և ստեղծում **մետատվյալների (metadata) համակարգ**, որը ժամանակակից թվային հումանիտար գիտությունների տեսանկյունից ունի առանձնահատուկ արժեք:

Տեր-Խաչատուրյանի աշխատություններում մատենագիտությունը քարտեզագրական փորձառություն է՝ ուղղված հայկական տպագիր մշակույթի տարածական և գաղափարական դաշտի վերակազմությանը: Տեր-Խաչատուրյանական «քարտեզագրումը» ներառում է տպագրական կենտրոնների աշխարհագրությունը, գրքային և մամուլային արտադրության տարածումը, գաղափարական ուղղությունների տեղաբաշխումը:

Ժամանակակից տեսական լեզվով սա կարելի է անվանել **գիտելիքի ենթակառուցվածքի (ինֆրաստրուկտուրայի) կառուցում**, որտեղ մատենագիտական տվյալները ձևավորում են մշակութային ցանցերի (cultural networks) հիմքը:

Թեև Տեր-Խաչատուրյանի աշխատություններում բացակայում է տեսական լեզվականացումը, նրա մեթոդաբանությունը ենթադրաբար համադրելի է մի շարք ժամանակակից տեսությունների հետ: Մշակութային հիշողության տեսության շրջանակում (Assmann 1995:125–133, Erll 2008:389–398) նրա հավաքած և համակարգած նյութը **ինստիտուցիոնալացնում է հիշողության նյութական կրիչները**: Հանրային ոլորտի տեսության (Habermas 2006:411–426) համատեքստում նա մատենագիտությունը դիտարկել է որպես **հանրային դիսկուրսի նյութական ենթակառուցվածքի քարտեզագրման** հնարավորություն: Գրքի պատմության նոր ուղղություններում, ի զարգացումն Ռ. Իշխանյանի գաղափարների, նրա աշխատանքները համընկնում են **տպագիր մշակույթի սոցիալական շրջանառության վերակազմության** խնդրին:

Այսպիսով, Տեր-Խաչատուրյանի մեթոդաբանությունը կարելի է դիտարկել «թաքնված (լատենտ) տեսական համակարգ», որը ժամանակակից գիտական լեզվով վերախմբավորվելով՝ ձեռք է բերում նոր բացատրական ներուժ:

Թեև Տեր-Խաչատուրյանին յուրահատուկ է մեթոդաբանական խստությունը, այդուհանդերձ կարելի է արձանագրել նաև որոշ սահմանափակումներ: Մասնավորապես, տեսական ինքնավերլուծության բացակայությունը երբեմն թույլ չի տալիս լիարժեք հասկանալու կիրառված մեթոդների գիտակցված ձևակերպումը: Որպես կանոն՝ սոցիալ-մշակութային վերլուծության շերտը հիմնականում մնում է ենթատեքստում:

Որոշ դեպքերում քանակական և վիճակագրական մեթոդների բացակայությունը սահմանափակում է տվյալների լայնածավալ համադրությունը: Սակայն այս սահմանափակումները պետք է դիտարկել ժամանակի գիտական մտքի համատեքստում: Դրանք չեն նվազեցնում նրա տիտանական աշխատանքի արժեքը, այլ ընդգծում են այն՝ որպես **հիմք կառուցող գիտական փորձառություն**, որի վրա կարող են հաստատվել նոր տեսական մոտեցումները:

Այսպիսով, Տեր-Խաչատուրյանի մատենագիտական մեթոդաբանությունը ներկայացնում է գիտական ճանաչողության այնպիսի մոդել, որտեղ փաստագրական խստությունը և համակարգային մտածողությունը միավորվում են մշակութաբանական ներուժի հետ:

Վեմ համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

Դժվար չէ նկատել, որ նրա մոտ մատենագիտությունը, որպես կանոն, վերածվում է գիտելիքի կազմակերպման մեխանիզմի, պատմական իրականության վերակազմության գործիքի, մշակութային հիշողության ինստիտուցիոնալացման հիմքի:

Տեր-Խաչատուրյանի գիտական ժառանգության մեջ հայ գիրքը ոչ միայն տեքստային հաղորդակցության միջոց է, այլև մշակութային հիշողության նյութականացված ձև: Նրա ուսումնասիրություններում գրքային արտադրանքը ձեռք է բերում բազմաշերտ նշանակություն՝ միաժամանակ լինելով պատմական փաստ, գաղափարական միջավայրի արտահայտություն և ազգային ինքնության վերարտադրության գործիք: Այս մոտեցումը նրան դուրս է բերում ավանդական մատենագիտական նկարագրության շրջանակներից և մոտեցնում ժամանակակից մշակութաբանության և հիշողության մասին ուսումնասիրությունների տեսական հարթակներին:

Տեր-Խաչատուրյանի աշխատանքներում գիրքը հիշողության կայունացման մեխանիզմ է: Եթե բանավոր մշակույթում հիշողությունը ենթակա է փոփոխության և կորուստի, ապա տպագիր գիրքը դառնում է հիշողության ֆիքսման (արձանագրման) և սերնդեսերունդ փոխանցման նյութական հենք: Այս ընկալումը թեև տեսականորեն ձևակերպված չէ, այնուամենայնիվ համընկնում է մշակութային հիշողության տեսության հիմնարար դրույթներին, ըստ որոնց՝ գրավոր տեքստերը երկարատև հիշողության կրիչներ են, որոնք ապահովում են պատմական փորձի շարունակականությունը: Տեր-Խաչատուրյանի մատենագիտական գործունեությունը այս իմաստով կարելի է դիտարկել իբրև **հիշողության ինստիտուցիոնալացման գործընթաց**, որտեղ գրքերը ոչ միայն հավաքվում և դասակարգվում են, այլև ներառվում են գիտական շրջանառության մեջ՝ որպես հիշողության համակարգված միավորներ:

Տեր-Խաչատուրյանի կազմած անհատական մատենագիտությունները (օրինակ՝ Լևոն Շանթի (Տեր-Խաչատուրեան 1969 ա), Շահան Պերպերյանի (Տեր-Խաչատուրեան 1969 բ), Ռուբեն Զարդարյանի (Տեր-Խաչատուրեան 1977) և այլոց վերաբերյալ) առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նրա գիտական գործունեության մեջ: Դրանք ներկայացնում են ոչ միայն տվյալ հեղինակների ստեղծագործական ժառանգության ամբողջական նկարագրությունը, այլև **մշակութային հիշողությունը վերականգելու նպատակային գործողությունը**:

Այս մատենագիտություններում առանձնապես կարևոր է մամուլի էջերում ցրված նյութերի հավաքումը: Սփռված, հաճախ մոռացության մատնված հրապարակումները Ա. Տեր-Խաչատուրյանի ձեռամբ համբե-

րատարությամբ վերադասավորվել են մեկ ամբողջության մեջ՝ ձևավորելով հեղինակային ներկայության ամբողջական պատկերը: Այս գործընթացը կարելի է անվանել **տեքստային արխիվի վերակազմություն**, որտեղ մատենագետը ստանձնում է միջնորդի դեր անցյալի և ներկայի միջև:

Հարկ ենք համարում շրջանառել Արտաշես Տեր-Խաչատուրյանի հեղինակային լրացումներն ու հավելումները «Շահան Ռ. Պէրպէրեան (1891-1956). կենսագրութիւն եւ մատենագիտութիւն» (Պէրրոյթ, 1969) գրքին, որոնք զարմանալիորեն դուրս են մնացել «Հայ գրքի մատենագիտական գործեր» (Պէրրոյթ, 2014) համահավաք հատորը հրատարակության պատրաստած ու խմբագրած **Կ. Հովհաննիսյանի** ուշադրությունից: Վերոհիշյալ կենսամատենագիտության առաջին հրատարակության հեղինակային միջամտություններով օրինակը, որի կազմին հեղինակի ձեռագրով նշված է «**Անձնական օրինակ**», պահվում է ՀՅԴ Բյուրոյի գրադարանում (Երևան), որից էլ բանաբաղում ենք, մեր կարծիքով, արժեքավոր լրացումներն ու հավելումները՝ իբրև սույն ուսումնասիրության ներդրում Ա. Տեր-Խաչատուրյանի մատենագիտական հարուստ ժառանգության հանրահռչակման գործում:

**Սաղիմական շրջան (1934-1944) բաժնում Ա. Տեր-Խաչատուրյանը, մասնավորապես, հավելել է. «1935 Հոկտ. 27-ին՝ բացման խօսքը կ'ընէ Սրբոց թարգմանչաց և Աստուածաշունչի թարգմանութեան ԺԵ. դարադարձի տօնակատարութեան (գ. ձեռնարկ) (բնագրում՝ երրորդ և վերջին հանդէս [էջ 360].- Մ.Հ.): Խոսքէն մաս մը տրուած է (««Սիոն», Թ. տարի, թ. 11(Նոյ., 1935), էջ 361)»:**

**Կիրակի. 29 դեկտ., կ.ե. («կէսօրէն վերջ» բնագրում.- Մ.Հ.) տեղի ունեցաւ Պր. Շ. (բնագրում՝ Շահան.- Մ.Հ.) Պէրպէրեանի կազմակերպած համերգը, իբրև նախերգանքը Ե. Ք.ի մեծ սրահին մէջ գալ ամիս ըլլալիք կատարելագոյնի մը («Սիոն», Ժ տարի, թ. 2 (փետր. 1936), էջ 61) (Տէր-Խաչատուրեան, 1969թ (Ա. օր.), 43):**

**Շաբաթ, 1 փետր. (1936). Պ. Շ. Պէրպէրեանի կազմակերպած հայկական մեծ համերգը փայլուն յաջողութեամբ տեղի ունեցաւ Ե.Ք.Ը.ի միջազգային սրահին մէջ («Սիոն», Ժ տարի, թ. 3 (Մարտ. 1936), էջ 95) (Տէր-Խաչատուրեան, 1969թ (Ա. օր.), 44):**

Հեղինակային ձեռագիր լրացումների այս երեք օրինակների համեմատումը որոշ եզրահանգումների հիմք է տալիս. նշումների միակերպությունը պահպանված չէ, օրինակ՝ «Սիոն»-ը առաջին մեջբերման մեջ ընդգծված չէ, զուգորդված են «Պր.» և «Պ.» ձևերը, ոչ բոլոր ամսանուն-

ներն են մեծատառով սկսվում և այլն: Իսկ «Խոսքէն մաս մը տրուած է» պնդումը այնքան էլ չի համապատասխանում իրականությանը, որովհետև բնագրում ավելի շուտ նրա ելույթի գնահատականն է. «**Ուսուցիչ Պ. Շահան Պէրպէրեան, իբրև կարգադիր Յանձնաժողովի երրորդ անդամը, սրտագրաւ անդրադարձուններով՝ կատարուած նախորդ երկու հանդէսներուն՝ եւ յստակադատ խորհրդածութիւններով՝ դարադարձային այս տօնակատարութեան հանդէսներու մասին, «բացման խօսք» է աւելի բացման բանախօսութիւն մը ըրաւ, յոյժ պատշաճ կերպով**» («Միտն», թիւ 11, 1935, 361): Այս տարբերությունները կարող են պայմանավորված լինել բնագրային առանձնահատկություններով: Հակված ենք մտածելու, որ արդեն ձեռագրի հրատարակչության գործընթացում հեղինակը ավելի բծախնդրորեն է սրբագրել հավաքած տվյալները, որը կրկին հավաստում է նրա տպագիր աշխատանքների անբասիր ձևավորման իրողությունը:

Պերպերյանի հրատարակած երկերի մատենագիտության մեջ Արտաշես Տեր-Խաչատուրյանը հավելել է երաժշտագետի ու խմբավարի (նաև՝ մանկավարժի, հոգեբանի, փիլիսոփայի) Կոմիտաս վարդապետի մասին ուշադրությունից վրիպած հրապարակումներից մեկը.

««Կոմիտաս» Շ. Պէրպէրեան, Նայիրի շար., Գ տարի. թ. 5 (23 Հոկտ., 1955), էջ 2-3, 8. թ. 6, էջ 2,8. թ. 7, էջ 2-3» (Տէր-Խաչատուրեան, 1969 ք (Ա. օր.), 62):

Մյուս հավելումը Շ. Պերպերյանի «Գեղագիտական հարցեր» պրակների հատվածում է.

«Եղիշէ վրդ. Տէրտէրեան, «Երուսաղէմի Հայ Մշակութային Միութեան եւ իր Տեղեկաբեր Ա., Բ., Գ. - Դ. պրակները». «Միտն», ԺՁ. Տարի. թ. 9-10 (Մեպտ. Հոկտ. 1942), էջ 185-186» (Տէր-Խաչատուրեան, 1969 ք (Ա. օր.), 63):

Կարևոր լրացում է ունեցել նաև «Հրատարակված ուսումնասիրություններ և հոդվածներ» բաժինը, մասնավորապես՝ իմաստասիրական աշխատանքների ցանկը.

«Մերուժան Պարսամեան խմբագրին յուշատետրը գրութեան՝ Հայ լեզուն արդի գրականութեան մէջ ակնարկին մէջ կ'անդրադառնայ այս գրութեան լեզուական անորոշութեան (Կեանք և արուեստ ամս., 9րդ տարի, թ. 6 (Յունիս-Յուլիս, 1939), էջ 199-140)» (Տէր-Խաչատուրեան, 1969 ք (Ա. օր.), 62-73):

Պարագայական (Մահագրական, գրախօսական, քրոնիկ, և այլն) բաժինը հարստացվել է ևս մի միավորով. «Զուարթնոց տա-

րեզ., խմբ.՝ Հրանդ Բալուեան, Ա. տարի. Փարիզ (1937): Գրախ.՝ Մ. Շ. (Շահան Պէրպէրեան), Սիոն, ԺԱ. Տարի, թ. 8 (օգ., 1937), էջ 257-258» (Տէր-Խաչատուրեան, 1969 թ (Ա. օր.), 80): Ավելին, «Մ. Շ.» հապավումը Ա. Տեր-Խաչատուրյանը բացել է «Շահան Պէրպէրեան», ինչը կարևոր տեղեկություն է մատենագետների համար: Հատկանշական է, որ այդ նունյականացումը հաստատվում է նաև այլ աղբյուրներով («Զուարթնոց», 1937, № 2, 15, Հովակիմյան, 2005, 270)<sup>7</sup>:

Այս բաժնի վերջին լրացումը նույնպես կարևոր է. «**Բարսեղ Կանաչեանի երաժշտական գործը**», «Նայիրի» շաբ., Ե. տարի, թ. 35 (12 Մայիս, 1957), էջ 4: Արտատպում է» (Տէր-Խաչատուրեան, 1969 թ (Ա. օր.), 83):

Ուշագրավ է նաև «Յօրինողական» բաժնի լրացումը, որը, հետագա վերահրատարակման պարագայում պիտի ստանար հերթական միավորի 14-րդ համարը. «**Խաչը, հեղ. Եղիշե Արք. Դուրեան. Երաժշտ. Շ. Ռ. Պէրպէրեանի: Երգուած է Սրբոյ թարգմանչաց և Աստուածաշնչի թարգմանութեան ԺԵ դարադարձի տօնակատարութեան**» («Սիոն», Թ. տարի. Թ. 11 (նոյ., 1935), էջ 361) (Տէր-Խաչատուրեան, 1969 թ (Ա. օր.), 85):

Համեմատելիս մենք պատահականորեն նկատեցինք, որ գրախոսվող հատորում ոչ միայն տեղ չի գտել այս հավելումը, այլև նույն բաժնի 5-րդ համարի միավորը դուրս է թողնվել (Տէր-Խաչատուրեան 2014ա, 302): Խոսքը «Ռուբէն Սեւակի «Կեանքի նաւակը հետք չձգեց իր ետին» քերթուածքը» մասին է (Տէր-Խաչատուրեան, 1969 թ (Ա. օր.), 84):

Պերպէրյանի կյանքին ու գործին նվիրված հոդվածների ցանկը լրացվել են հինգ կարևոր միավորներով: Նախ. «Եղիվարդ, «Օրեր». Շ. Ռ. Պէրպէրյանին, Հայ Կեդրոն տարեցոյց, խմբ.՝ Յարութին վրդ. Մուշեան. Պուէնտս Այրէս, «Արարատ» տպ. 1954. էջ 261» (Տէր-Խաչատուրեան, 1969 թ (Ա. օր.), 90): Մյուս լրացումը հետևյալն է. «Տօքթ. Տիգրան Վարժապետեան. «Շ. Պէրպէրեան». Հայաստանի կոչնակ, 1948), էջ 80-ից» (Տէր-Խաչատուրեան, 1969 թ (Ա. օր.), 91): Այստեղ մենք նկատում ենք ձգբրտման կամ հայտնաբերման ենթակա տվյալներ: Երկար որոնումներից հետո մեզ հաջողվեց գտնել և լրացնել ինչպես պակասող տվյալները (ԽԸ. ՏԱՐԻ, ՅՈՒՆՈՒՄԸ 24, 1948, ԹԻԻ 4), էջ 80-82), այնպես էլ ձգբրտել վերնագիրը՝ այն բնագրում այսպիսին է. «ՇԱՀԱՆ Ռ. ՊԵՐՊԵՐԵԱՆ (ԻՐ ՅՈՒՆՈՒՄԸ ԱՌԻԹՈՎ)» (Վարժապետեան, 1948, 80-82):

<sup>7</sup> Այս «Մ. Շ.» հապավումը չպետք է շփոթել «Հայրենիք» ամսագրում առկա «Մ. Շ.» (Մարտին Շաթիրյան) ծածկանունի հետ:

Հաջորդ հավելումը նկարի մասին է. «Շ. Պերպերյան. (նկարը), Նա-  
լիքի շաբ. Ե. տարի. թ. 6, էջ 1 (21 Հոկտ. 1956)» (Տէր-Խաչատուրեան, 1969 ք  
(Ա. օր.), 92): Մյուսը մահախոսական է. «**«Շ. Պերպերյան ոչ եւս է».** Հան-  
**դէսի Մշակույթի. Հրատ. Կեդրոնական Սանուց Միութեան (Պոլիս), Զ.  
շրջան, թ. 25 (1957), էջ 28-29»** (Տէր-Խաչատուրեան, 1969 ք (Ա. օր.),  
93):

Եվ վերջին լրացումը, որ հասցրել է կատարել Արտաշես Տեր- Խա-  
չատուրյանը կենդանության օրով, Շ. Պերպերյանին նվիրված հրապարա-  
կումների («Նոր գիր», 1949/1950, 247-256) շարքն է.

**«Շահան Պերպերեանի ի պատիւ.**

**ա) Նախաբան, Բ. Նուրիկեան, «Նոր գիր», ԺԱ. Տարի, թ. 4  
(Զմեռ, 1949), էջ 247-249.**

**բ) Յովհ. Աւագեան, «Շ. (բնագրում՝ Շահան.- Մ.Հ.) Պերպերեան  
գրագէտը», Նոյն, էջ 249-253:**

**գ) Վահան Տ. Սինի, «Շ. (բնագրում՝ Շահան.- Մ.Հ.) Պերպե-  
րեան դաստիարակը», Նոյն, էջ 253-256:**

**դ) Միհրան Թումաճան, «Շ. (բնագրում՝ Շահան.- Մ.Հ.) Պեր-  
պերեան արուեստագետը», Նոյն, ԺԲ տարի. թ. 1 (Գարուն, 1950),  
էջ 47-51» (Տէր-Խաչատուրեան, 1969 ք (Ա. օր.), 94):**

Բնագրի հետ համեմատությունից պարզվեց, որ Մ. Թումաճանը Շ.  
Պերպերյանին անդրադարձել է «Մեր արուեստի մարդոց հետ» ընդհա-  
նուր խորագրով շարքի սկզբում (Ա.), որին ամսագրի խմբագրությունը  
կցել էր հետևյալ ծանոթագրությունը. «Անցեալ նոյեմբեր 5ին, Նիւ Եորքի  
մէջ, Նոր Գիրի կողմէն ի պատիւ Շահան Պերպերեանի սարքուած երեկոյ-  
թին առիթով տրուած է այս ուղերձը» («Նոր գիր», 1950, 48):

Արտաշես Տեր-Խաչատուրյանի աշխատանոցի այս նմուշները  
լույս են սփռում ուսումնասիրողի գործելառձի նրբությունների վրա,  
որոնցից կարելի է առանձնացնել անգամ տպագրված գործերի լրա-  
մշակմամբ շարունակաբար զբաղվելու նրա հանձնառությունը, որ ոչ  
միայն աշխատանքի բնույթից, այլև մասնագետի քննախույզ բնավո-  
րությունից է գալիս: Այս առումով Տեր-Խաչատուրյանի գործունեութ-  
յունը ստանում է ոչ միայն գիտական, այլև մշակութային-քաղա-  
քակրթական նշանակություն. այն հիշողության կորուստի դեմ պայ-  
քարի և պատմական շարունակականության պահպանման վկայութ-  
յուն է:

Տեր-Խաչատուրյանի մոտեցման առանձնահատուկ արժեքը բացա-  
հայտվում է հատկապես սփյուռքյան իրականության համատեքստում, որ-

տեղ գրքային ժառանգությունը ենթակա է տարածական մասնատմանը, ֆիզիկական կորստին և ինստիտուցիոնալ անպաշտպանվածությանը:

Այս պայմաններում մատենագիտությունը դառնում է ոչ միայն գիտական գործիք, այլև **պաշտպանական ռազմավարություն**: Գրքերի և տպագիր նյութերի համակարգումը, դրանք տեղորոշելն ու նկարագրելը հնարավորություն են տալիս վերականգնելու մշակութային ամբողջականությունը նույնիսկ այն դեպքում, երբ նյութական կրիչները մասնակիորեն կորսված են:

**Այսպիսով, Տեր-Խաչատուրյանի աշխատանքը կարելի է դիտարկել որպես սփյուռքյան մշակութային հիշողության վերակազմության փորձ, որտեղ մատենագիտությունը վերածվում է տարածականորեն ցրված ժառանգության միավորման արդյունավետ մեխանիզմի, միջոցի, գործիքակազմի:**

Տեր-Խաչատուրյանի մոտ գիրքը գիտելիքի կառուցվածքային տարր է: Նրա մատենագիտական համակարգումները հնարավորություն են տալիս տեսնելու ոչ միայն առանձին հրատարակությունները, այլև դրանց միջև եղած այնպիսի հարաբերությունները, ինչպիսիք են թեմատիկ համադրությունները, հեղինակային ցանցերը, տպագրական կենտրոնների փոխազդեցությունը:

Այս մոտեցումը գրքային ժառանգությունը վերածում է **գիտելիքի ցանցային համակարգի**, որտեղ յուրաքանչյուր միավոր ընդհանուր կառուցվածքում իր տեղը ունի: Այս տեսանկյունից՝ Տեր-Խաչատուրյանի կազմած մատենագիտությունը ոչ միայն փաստագրական, այլև վերլուծական գործիք է, որը բացահայտում է մշակութային արտադրության ներքին տրամաբանությունը:

Չնայած Տեր-Խաչատուրյանի «Հայ գրքի մատենագիտական գործեր» և «Հայ մամուլի մատենագիտական գործեր» ժողովածուները տարբեր թեմատիկ ուղղվածություն ունեն, ուստիև դրանք ներկայացնում ենք առանձնաբար, բայց կառուցակարգված են որպես միասնական գիտական նախագիծ: Առաջինը ձևավորում է գրքային մշակույթի հիմքային շերտը՝ ապահովելով պատմական խորությունը, իսկ երկրորդը բացահայտում է այդ մշակույթի դինամիկ զարգացումը մամուլի միջոցով:

Այս փոխլրացնող հարաբերությունը կարելի է մեկնաբանել որպես **ստատիկ (կայուն) և դինամիկ (զարգացող)** համակարգերի համադրություն. 1) գիրքը՝ որպես հաստատուն, կուտակվող հիշողություն, 2) մամուլը՝ որպես ընթացիկ, փոփոխական դիսկուրս (խոսույթ): Տեր-Խաչատուրյանի մոտ երկուսն էլ ներառվում են միասնական մատենագիտական

համակարգում՝ ձևավորելով հայկական տպագիր մշակույթի ամբողջական պատկերը:

Թեև նշված ձեռքբերումները բավականին տպավորիչ են, բայց և այնպես անհրաժեշտ է արձանագրել նաև որոշ սահմանափակումներ:

**Առաջին հերթին՝** Տեր-Խաչատուրյանի մոտ գրքի մշակութաբանական ընկալումը հիմնականում մնում է ենթատեքստում և չի ստանում տեսականորեն համակարգված ձևակերպում: Դա սահմանափակում է նրա աշխատանքի տեսական ընթեռնելիությունը՝ ժամանակակից միջդիսցիպլինար դաշտում:

**Երկրորդ՝** ընթերցողական փորձառությունների և գրքի հանրային շրջանառության վերլուծությունը գրեթե բացակայում է: Գիրքը դիտարկվում է որպես արտադրանք, սակայն քիչ է ուսումնասիրվում այն ընկալելու և օգտագործելու հանրային դաշտը:

Այնուամենայնիվ, այս սահմանափակումները չեն նվազեցնում աշխատանքի արժեքը, այլ ընդգծում են նրա հիմնարար բնույթը՝ որպես **հիմք ստեղծող գիտական հարթակ**, որի վրա հնարավոր է կառուցել նոր՝ տեսականորեն հագեցած ուսումնասիրություններ:

Այսպիսով, Ա. Տեր-Խաչատուրյանի մոտ հայ գիրքը վերածվում է ոչ միայն պատմական աղբյուրի, այլ մշակութային հիշողության ինստիտուցիոնալ կրիչի: Նրա մատենագիտական գործունեությունն ապահովում է այդ հիշողության հավաքագրումը, համակարգումը և գիտական շրջանառությունը՝ ձևավորելով ազգային ինքնագիտակցության նյութական հիմքը:

Այս տեսանկյունից նրա ժառանգությունը պետք է գնահատել որպես գիտելիք կազմակերպելու այնպիսի համակարգ, որտեղ գրքին վերապահվում է պատմական փորձը պահպանելու և փոխանցելու հիմնական մեխանիզմի գործառույթ:

Հետևաբար, Տեր-Խաչատուրյանի աշխատանքները հաստատում են, որ մատենագիտությունը ոչ թե օժանդակ, այլ հիմնարար գիտակարգ է, որն անմիջականորեն ներգրավված է մշակութային հիշողություն կառուցելու և ազգային ինքնությունը պահպանելու գործընթացներում:

### 3. Արտաշես Տեր-Խաչատուրյանի գիտական նախագծի համակարգային վերլուծություն

«Հայ գրքի մատենագիտական գործեր» հատորի արժեքը պայմանավորված է ոչ միայն նրանում ընդգրկված նյութի ծավալով, այլև առա-

վելապես դրա կառուցվածքային կազմակերպմամբ և գիտական ինտեգրվածությամբ: Այն առանձին ուսումնասիրությունների պարզ կուտակում չէ, այլ ձևավորում է հայ գրքային մշակույթի վերակազմության միասնական դաշտ՝ հիմնված խիստ մեթոդաբանական սկզբունքների վրա:

Այս առումով ժողովածուն կարելի է համարել **գիտական սինթեզի օրինակ**, որտեղ տարբեր ժամանակներում և տարբեր խնդիրների շրջանակում իրականացած հետազոտությունները միավորվում են ընդհանուր տեսականի ներքո՝ վերածվելով համակարգային գիտելիքի:

Ժողովածուի ներքին կառուցվածքն ունի հստակ գիտական տրամաբանություն, որը թույլ է տալիս այն դիտարկելու որպես բազմամակարդակ վերլուծական համակարգ: Այստեղ համադրվում են մի քանի փոխլրացնող ուղղություններ՝ ա) հնատիպ և վաղ շրջանի հայ տպագրության քննություն (Տեր-Խաչատուրեան 2014 ա: 11-24), բ) Հեղինակային (Խաչատուրեան 2014 ա: 63-196, 247-314) և թեմատիկ (Խաչատուրեան 2014 ա: 317-366, 369-395) մատենագիտության մշակում, գ) տպագրական կենտրոնների գործունեության ուսումնասիրություն (Խաչատուրեան 2014 ա: 13-23, 28-34), դ) գրքային արտադրության տարածման և շրջանառության վերլուծություն, ե) մատենագիտական դասակարգման սկզբունքների մշակում:

Այս բազմաշերտությունը չի խախտում աշխատության միասնականությունը, քանի որ բոլոր բաղադրիչները միավորված են **հայ գրքի պատմության գիտական քարտեզագրման** ընդհանուր խնդրի շուրջ:

Կարևոր է նաև, որ ժողովածուի կառուցվածքը չի սահմանափակվում ժամանակագրական հաջորդականությամբ. այն ներառում է թեմատիկ և խնդրակարգային հատումներ, որոնք թույլ են տալիս դիտարկելու գրքային մշակույթը ոչ միայն ժամանակի, այլև գործառույթների և ազդեցության շրջանակում:

Ժողովածուի հիմքում ընկած է լայնածավալ աղբյուրագիտական աշխատանք, որը ներառում է տպագիր բնօրինակների, արխիվային փաստաթղթերի, գրադարանային և մասնավոր հավաքածուների նյութերի համադրություն:

Տեր-Խաչատուրյանի մոտ աղբյուրագիտական քննությունը վերածվում է բազմաստիճան գործընթացի, որը ներառում է տվյալների նույնականացումը և ստուգումը, տարբեր աղբյուրների միջև համեմատությունը, հակասություններ բացահայտելը և մեկնաբանելը, նախորդ մատենագիտական ավանդույթի քննադատական վերանայումը:

Այս մեթոդաբանության շնորհիվ՝ ժողովածուն, ինչպես նշեցինք, ստացել է ոչ միայն փաստագրական, այլև **սրբագրական գիտական արժեք**. այն վերանայում և ձգբրտում է հայ գրքագիտության մեջ շրջանավոր տվյալների զգալի մասը: Այս առումով հատկապես հիշարժան է Հակոբ Մեղապարտի Սաղմոսարանի հետ կապված հարցերի ձգբրտումը, որը կատարվել է սկզբնաղբյուրների և նախորդ ուսումնասիրողների աշխատությունների մանրագնի քննությամբ (Խաչատուրեան 2014 ա: 55-62): Հատկանշական է, որ այս գործընթացը հաճախ ուղեկցվում է թաքնված (լատենտ) գիտական բանավեճով՝ առանց բացահայտ հակադրության, սակայն հստակ փաստարկված ձգբրտումների միջոցով (Խաչատուրեան 2014 ա: 57-61):

Ժամանակագրությունը ժողովածուում ունի ոչ միայն դասակարգման, այլև վերլուծական նշանակություն: Տեր-Խաչատուրյանը ժամանակային կարգավորումն իրավացիորեն օգտագործում է որպես պատմական գործընթացների վերակազմության միջոց (Խաչատուրեան 2014 ա: 31-33):

Հատկապես հնատիպ գրքերի և վաղ տպագրության ուսումնասիրություններում ժամանակագրական ձգբրտումները ձեռք են բերում սկզբունքային նշանակություն, քանի որ թույլ են տալիս վերանայելու տպագրության սկզբնական փուլերի մասին պատկերացումը, ձգբրտելու առանձին հրատարակությունների տեղը ընդհանուր գործընթացում, բացահայտելու տպագրական կենտրոնների առաջացման և գործունեության հաջորդականությունը: Այս մոտեցումը ցույց է տալիս, որ ժամանակագրությունը նրա համար ոչ թե օժանդակ տեխնիկա է, այլ **պատմագիտական վերլուծության կառուցվածքային առանցք**:

Ժողովածուում գիրքը բազմաբաղադրիչ գիտական հետազոտության առարկա է, որն ունի միաժամանակ մի քանի չափումներ՝ ա) նյութական (տպագիր արտադրանք), բ) բովանդակային (տեքստ և գաղափար), գ) ինստիտուցիոնալ (տպագրություն, հրատարակչություն), դ) մշակութային (հիշողություն, ինքնություն): Այս բազմաշերտ ընկալումը թույլ է տալիս հաղթահարելու գրքի նեղ, տեքստակենտրոն ըմբռնումը և այն դիտարկելու որպես **մշակութային արտադրության համակարգային տարր**:

Տեր-Խաչատուրյանի մոտ գիրքը ներառվում է սոցիալ-մշակութային հարաբերությունների դաշտ՝ որպես գաղափարական հոսքերի, կրթական գործընթացների և հանրային մտածողության ձևավորման միջնորդ:

Ժողովածուի հիմքում ընկած մեթոդաբանությունը կարելի է ներկայացնել որպես փոխկապակցված սկզբունքների համակարգ, որը պայմանավորում է աշխատանքի գիտական որակը:

ա) Փաստի առաջնայնություն և աղբյուրագիտական խստություն: **Ժողովածուի յուրաքանչյուր նյութ վկայում է, որ տվյալների ընտրությունն ու ներկայացումը Տեր-Խաչատուրյանը ենթարկել է մանրագնի ստուգման: Հեղինակը հետևողականորեն հիմնվել է առաջնային աղբյուրների վրա՝ նվազագույնի հասցնելով երկրորդական տվյալների ազդեցությունը:** Այս մոտեցումը, մեր կարծիքով, ապահովում է գիտական բարձր վստահելիությունը և միաժամանակ թույլ է տալիս վերանայելու արդեն գոյություն ունեցող կամ շրջանառվող գիտելիքը:

բ) Ժամանակագրական ճշգրտություն: **Ժամանակային հստակեցումները ժողովածուի նյութերում պատմական վերակազմության հիմնական գործիք են: Յուրաքանչյուր թվագրական ճշգրտում ունի ոչ միայն փաստագրական, այլև մեկնաբանական հետևանքներ:**

գ) Գիտական անաչառություն և ընդգրկման ամբողջականություն: **Ինչպես վկայում են ժողովածուի հրապարակումները՝ դրանց հեղինակը ձգտում է ներկայացնել հնարավոր չափով ամբողջական պատկեր՝ ներառելով տարբեր տարածաշրջանների, գաղափարական ուղղությունների և տպագրական ավանդույթների նյութերը: Ակներևաբար, դա հատկապես կարևոր է բազմակենտրոն հայկական տպագրության պայմաններում:**

դ) Գիրքը՝ մշակութային ինստիտուտ: **Գրքի նկատմամբ կիրառվում է ընդլայնված տեսական հայեցակարգ, որտեղ այն դիտարկվում է որպես մշակութային և քաղաքակրթական գործընթացների արտահայտություն: Այս մոտեցումը, մեր կարծիքով, թեև ոչ բացահայտ տեսականացված, հատորին հաղորդում է խորքային վերլուծական ներուժ:**

Միով բանիվ, «Հայ գրքի մատենագիտական գործեր» ժողովածուն հայ գրքագիտության մեջ համակարգային մտածողության բարձրագույն դրսևորումներից մեկն է: Այն միավորում է փաստագրական խստությունը, կառուցվածքային կազմակերպվածությունը և մշակութաբանական ներուժը՝ ձևավորելով այն գիտական հենքը, որի վրա հնարավոր է կառուցել ինչպես պատմագիտական, այնպես էլ տեսական ուսումնասիրություններ:

Այս տեսանկյունից Արտաշես Տեր-Խաչատուրյանի աշխատանքը պետք է գնահատել որպես գիտական համակարգ, որը շարունակում է պահպանել իր արդիականությունը և հետագոտական արդյունավետու-

Վեյն համահայկական հանդես, ԺԸ (ԻԴ) տարի, թիվ 1(93), հունվար-մարտ, 2026

թյունը հայ գրքի պատմության ուսումնասիրության ժամանակակից փուլում:

#### 4. Մասնագիտական ձեռքբերումներ և սահմանափակումներ. հատորի գիտական նշանակությունը

«Հայ գրքի մատենագիտական գործեր» հատորի առանցքային ձեռքբերումներից մեկը հայ տպագրության **համակարգային վերակազմությունն** է, որը կարելի է անվանել կառուցվածքային քարտեզագրում: Տպագրական կենտրոնները, հրատարակչական նախաձեռնությունները և հեղինակային արտադրանքը ներկայացվում են ոչ թե մեկուսացված միավորների տեսքով, այլ փոխկապակցված մշակութային դաշտի շրջանակում:

Այս մոտեցումը հնարավորություն է տալիս վերականգնելու գրքային արտադրության տարածական և գաղափարական զարգացումը՝ բացահայտելով ինչպես տպագրական ցանցերի ձևավորումը, այնպես էլ գրքի միջոցով գաղափարների շրջանառության ուղիները: Արդյունքում ձևավորվում է հայկական տպագիր մշակույթի ամբողջական և ներքին կապերով պայմանավորված պատկերը:

Հատորի կարևորագույն արժանիքներից է մատենագիտական նյութի կազմակերպման բարձրակարգ համակարգը: Տվյալների դասակարգումը իրականացվում է բազմաչափ սկզբունքով՝ համադրելով ժամանակագրական, թեմատիկ, հեղինակային և ինստիտուցիոնալ չափումները: Այս կառուցվածքը ոչ միայն ապահովում է նյութի հստակ ընթեռնելիությունը, այլև ստեղծում է **վերլուծական միջավայր**, որտեղ հնարավոր է տեսնել գրքային մշակույթի ներքին օրինաչափությունները: Նման կազմակերպումը հետագա ուսումնասիրությունների համար ձևավորում է մեթոդական հուսալի հիմք՝ նվազեցնելով տվյալների պատահական մեկնաբանության ռիսկը:

Տեր-Խաչատրյանի աշխատանքն էական դեր է խաղում հայ մատենագիտության՝ որպես ինքնուրույն գիտակարգի կայացման գործում: Նրա մոտ մատենագիտությունը ներկայանում է ոչ թե օժանդակ գործիք, այլ գիտելիքի արտադրության ինքնուրույն մեխանիզմ՝ սեփական մեթոդաբանությամբ և քննադատական գործառնություններով:

Այս դիրքորոշումը հատկապես կարևոր է, քանի որ այն սահմանում է գիտական աշխատանքի չափանիշներ՝ առանձնացնելով փաստագրա-

կան խստությունը, աղբյուրների համադրությունը և քննադատական վերլուծությունը՝ որպես պարտադիր բաղադրիչներ:

Ժողովածուն հրատարակումից մինչ օրս շարունակում է գործել որպես հայ գրքի պատմության ուսումնասիրության հիմնական աղբյուրագիտական հենարաններից մեկը: Այն ապահովում է տվյալների ստուգված բազա, որի շնորհիվ հետազոտողը կարող է կենտրոնանալ վերլուծության վրա՝ նվազագույնի հասցնելով նախնական որոնումների և տվյալների ճշգրտման ծախսերը:

Այսպիսով, աշխատությունը կատարում է **գիտական ենթակառուցվածքի** դեր՝ ապահովելով հետագա ուսումնասիրությունների արդյունավետությունը:

Տեր-Խաչատուրյանի գործունեության կարևոր բաղադրիչ է տպագիր նյութերի հավաքումն ու պահպանությունը, որի շնորհիվ գիտական շրջանառության մեջ են մտել բազմաթիվ եզակի օրինակներ:

Այս գործունեությունը չի կարելի դիտարկել որպես կենսագրական հավելում. այն ուղղակիորեն պայմանավորում է նրա աշխատությունների աղբյուրագիտական հարստությունը և գիտական հավաստիությունը: Հետևաբար, այստեղ մատենագիտությունը Տեր-Խաչատուրյանը դիտարկում է նաև որպես **պաշտպանական գիտական փորձառություն**, որն ապահովում է մշակութային հիշողության նյութական հիմքի շարունակականությունը:

Ժողովածուն ներկայացնում է գիտելիքի կազմակերպման այնպիսի մոդել, որտեղ փաստագրությունը ենթարկված է համակարգային տրամաբանության: Տվյալների այս ձևով կազմակերպումը հնարավորություն է տալիս ոչ միայն պահպանելու, այլև փոխանցելու գիտելիքը՝ ապահովելով դրա հասանելիությունը և կիրառելիությունը տարբեր հետազոտական համատեքստերում:

Այս իմաստով՝ աշխատությունը կարելի է համարել **ինստիտուցիոնալ հիշողության կառուցման մեխանիզմ**:

Աշխատությունը կառուցված է փաստագրական խիստ սկզբունքների վրա, սակայն տեսական ընդհանրացումները հիմնականում մնում են ներքին մակարդակում: Ուստի միջազգային գրքագիտական և մշակութաբանական տեսությունների հետ բաց երկխոսության սահմանափակությունը որոշ չափով նեղացնում է աշխատանքի համեմատական ներուժը:

Թեև գիրքը դիտարկվում է որպես մշակութային արժեք, համեմատաբար քիչ ուշադրություն է դարձվում դրա հանրային շրջանառությանը՝ ընթերցողական միջավայրին, սպառելու մշակութին և գրքային շուկայի

գործոններին: Այս ուղղությունները կարող էին լրացնել աշխատության վերլուծական հորիզոնը: Մյուս կողմից՝ հարկ է նկատել, որ այդ խնդրի լուծումը մեկ անձի՝ թեկուզ անխոնջ մասնագետի ուժերից վեր էր՝ առանց գիտատուսմանական որևէ հաստատության հնարավորությունների ու ներուժի լայն ներգրավման:

Ժողովածուն ստեղծվել է նախաթվայնացման պայմաններում, որի հետևանքով բացակայում են տվյալների թվային կազմակերպման և որոնման հնարավորությունները: Սակայն սա պետք է դիտարկել որպես ժամանակային, այլ ոչ մեթոդաբանական սահմանափակում, քանի որ կիրառված սկզբունքները լիովին ենթակա են ժամանակակից թվային վերախմաստավորման: Ա. Տեր-Խաչատուրյանի բժախնդիր աշխատանքը տվել է իր պտուղները. նրա ներկայացրած տվյալները գրեթե ունեն ժամանակակից ծրագրային (համակարգչային) համակարգվածությունն ու ճշգրտությունը:

«Հայ գրքի մատենագիտական գործեր» աշխատությունը, ինչպես և հեղինակի մյուս գործերը, ներկայացնում է հայ գրքի պատմության ամբողջական գիտական վերակազմություն՝ համադրելով աղբյուրագիտական խստությունը և կառուցվածքային մտածողությունը: Այն ձևավորում է այնպիսի գիտական հենք, որը միաժամանակ ծառայում է թե՛ տվյալները պահպանելուն, թե՛ դրանք վերլուծելուն:

Արտաշես Տեր-Խաչատուրյանի ներդրումը կարելի է բնութագրել որպես հիմնարար-կարգավորող նշանակություն ունեցող աշխատանք, որը սահմանում է ոլորտի գիտական չափորոշիչները և շարունակում է գործել որպես հետազոտական ակտիվ ռեսուրս:

Տեր-Խաչատուրյանի աշխատանքի ուժեղ կողմերը կարելի է ամփոփել հետևյալ ուղղություններով՝ աղբյուրագիտական բժախնդրություն և տվյալների բարձր ճշգրտություն, կառուցվածքային և համակարգային մտածողություն, գիտական քննադատության մշակույթի հաստատում, համազգային գիտական տարածքի ձևավորման ձգտում, տպագրի մշակույթի ըմբռնում՝ որպես հիշողության կրիչ:

### Եզրակացություններ

Այսպիսով, ներկա ուսումնասիրությունում իրականացված բազմակողմանի վերլուծությունը թույլ է տալիս Արտաշես Տեր-Խաչատուրյանի մատենագիտական ժառանգությունն իմաստավորել ոչ միայն որպես տվյալների կուտակման արդյունք, այլև **գիտելիքի կազմակերպման և մշակույթային հիշողության ինստիտուցիոնալացման համակարգային**

**մոդել:** Նրա «Հայ գրքի մատենագիտական գործեր» աշխատությունը ձևավորել է այնպիսի գիտական ենթակառուցվածք, որի հիման վրա հնարավոր է վերակազմել հայկական տպագիր մշակույթի պատմական, տարածական և գաղափարական զարգացումը:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ թեև Տեր-Խաչատուրյանի մատենագիտական մեթոդաբանությունը, ձևակերպված չէ տեսական բացահայտ լեզվով, ունի հստակ էպիստեմոլոգիական (**իմացաբանական**) հիմք: Այն միավորում է փաստի առաջնայնության վրա հիմնված աղբյուրագիտական խստությունը, ժամանակագրական կառուցվածքների միջոցով պատմական գործընթացների վերակազմությունը, տվյալների համակարգման միջոցով գիտելիքի կառուցվածքային կազմակերպումը:

Այս երեք բաղադրիչների համադրությունը ձևավորում է **մատենագիտության՝ որպես գիտական ճանաչողության ինքնուրույն համակարգի**, ընկալումը, որը դուրս է գալիս օժանդակ գիտակարգի սահմաններից:

Միաժամանակ, նրա աշխատանքների վերաիմաստավորումը ժամանակակից տեսական դաշտում ցույց է տալիս, որ դրանք համադրելի են մշակութային հիշողության, գրքի պատմության և հանրային դիսկուրսի ուսումնասիրությունների առանցքային մոտեցումների հետ: Այս իմաստով Տեր-Խաչատուրյանի ժառանգությունը կարելի է բնութագրել որպես **ներսում կառուցված**, բայց ոչ **դեկլարատիվ** ձևակերպված տեսամեթոդաբանական համակարգ, որը ենթակա է ժամանակակից գիտական լեզվով վերարտադրման և հետագա զարգացման: Այլ խոսքով՝ նրա ժառանգությունը մի **իմպլիցիտ (անուղղակի)**<sup>8</sup> տեսամեթոդաբանական համակարգ է, որի սկզբունքները ներդրված են նրա աղբյուրագիտական պրակտիկայի և դասակարգման կառուցվածքների մեջ և որը լիովին վերարտադրելի է ժամանակակից միջդիսցիպլինար տեսական շրջանակներում:

<sup>8</sup> Իմպլիցիտը (implicit) մի հասկացություն է, որը ցույց է տալիս, թե ինչպես կարող է իմաստը կամ կանոնը աշխատել առանց բառացիորեն նշված լինելու: Կիրառվում է անուղղակի, ներհատուկ, ենթադրյալ կամ թաքնված նշանակությամբ, որը պարունակվում է մի բանի մեջ, բայց բացահայտ արտահայտված չէ:

Վերախմնաստավորելով Ա. Տեր-Խաչատուրյանի գիտական ներդրումը՝ վերլուծության միջոցով հնարավորություն ենք ունեցել առանձնացնելու նրա գործունեության մի շարք հիմնարար արդյունքները. ա) հայկական տպագիր մշակույթի կառուցվածքային քարտեզագրում, բ) մատենագիտական տվյալների կազմակերպման ստանդարտացված մոդելի ձևավորում, գ) աղբյուրագիտական քննության սրբագրական (կոռեկտիվ) մեխանիզմների ներդրում, դ) գիտելիքի կուտակման և փոխանցման ինստիտուցիոնալ համակարգի ստեղծում:

Այս ձեռքբերումները Տեր-Խաչատուրյանի աշխատանքը փաստագրական մակարդակից տեղափոխում են **գիտական ենթակառուցվածքի ձևավորման մակարդակ**, ինչը նրա ժառանգությանը հաղորդում է երկարաժամկետ կիրառական արժեք:

Ինչ վերաբերում է Տեր-Խաչատուրյանի աշխատության մշակութաբանական և հայագիտական նշանակությանը, ապա արձանագրվել է, որ նրա մոտ գիրքը ստացել է ոչ միայն ազգային հիշողության նյութական կրիչի, այլև պատմական ինքնագիտակցության պահպանմանը և վերարտադրությանը նպաստող միջուկի գործառույթ: **Այս դիտանկյունից նրա գործունեությունը կարելի է մեկնաբանել որպես** մշակութային հիշողության ինստիտուցիոնալացում:

Հայագիտական հետազոտությունների դաշտում սա ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ հայկական տպագիր մշակույթը բնութագրվում է տարածական բազմակենտրոնությամբ և պատմական ընդհատումներով, որոնք պահանջում են գիտական համակարգման հատուկ մեթոդներ: Ա. Տեր-Խաչատուրյանը, հենվելով իր նախորդների և իր բազմամյա ուսումնասիրությունների փորձառության վրա, հաջողությամբ լուծել է այդ ոչ դյուրին խնդիրը:

Բարձր գնահատելով Տեր-Խաչատուրյանի աշխատության հիմնարար արժեքը, միաժամանակ հարկ ենք համարում հիշեցնել, որ այն ստեղծվել է նախաթվայնացման շրջանում և տեսական միջգիտակարգայնության սահմանափակ պայմաններում: Ուստի այդ հանգամանքը բացում է նոր հետազոտական հնարավորություններ, ինչպիսիք են մատենագիտական տվյալների թվայնացումը և տվյալաբանական (data-driven) վերլուծությունը, գրքի սոցիալական պատմության զարգացումը՝ ընթերցողական փորձառությունների և հաղորդակցական միջավայրերի ուսումնասիրությամբ, միջազգային տեսական դաշտի հետ առավել խիտ համադրությունը:

Այսպիսով, Տեր-Խաչատուրյանի աշխատանքը ոչ միայն ավարտված գիտական արդյունք է, այլև **բաց հետազոտական հարթակ**, որը ենթակա է շարունակական վերաիմաստավորման:

**Ամփոփելով**, կարող ենք արձանագրել, որ Արտաշես Տեր-Խաչատուրյանի մատենագիտական ժառանգությունը հայ գրքագիտության հենասյուններից մեկն է: Դա հաստատվում է այն իրողությամբ, որ նրա աշխատանքը միաժամանակ սահմանում է գիտական չափորոշիչներ, ձևավորում է տվյալների հուսալի շտեմարան և ապահովում է հետագա տեսական ու կիրառական հետազոտությունների հնարավորություն:

Այս տեսանկյունից Տեր-Խաչատուրյանի ներդրումը կարելի է բնութագրել որպես **հիմնադիր-կարգավորող** (foundational-regulatory) նշանակության գիտական համակարգ, որի ազդեցությունը շարունակվում է ոչ միայն հայագիտության անդաստանում, այլև կարող է արդյունավետորեն ներգրավվել ժամանակակից միջազգային գիտական խոսույթում:

**Մհեր Ա. Հարությունյան** – մենագրությունների և բազմաթիվ գիտական հոդվածների հեղինակ է: Զբաղվում է Հայոց նորագույն պատմության, ռազմագիտության, պատմագրության, մամուլի և մատենագիտության և հարակից այլ հիմնահարցերով:

### Օգտագործված գրականություն

1. **Աբրահամյան, Ա.** (1959). Հայ գրի և գրչության պատմություն, Եր., «Հայպետհրատ», (416 էջ):
2. **Աբրահամյան, Ա.** (2012). Հայ գրի և գրչության պատմություն, խմբ.՝ Եղիազարյան, Ն., Եր., Առեղիտ, (436 էջ):
3. Ազգային գրադարանում կգործի Արտաշես Տեր-Խաչատուրյանի անվան անհատական հավաքածուն (2020).  
<https://www.youtube.com/watch?v=CxhGjZOqyR8>
4. **Այվազյան, Հ., խմբ.** (2015). Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա, Եր., Հայկական հանրագիտարան, (1120 էջ):
5. **Անասեան, Հ., խմբ.** (1963). Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ (1512-1800), Համառոտ նկարագրություններով և ծանոթագրություններով: Կազմ.՝ Հ.Մ. Դավթյան, Հ. Հ. Սիլվանյան, Ն. Ա. Ոսկանյան և ուրիշ.: ՀՍՍՌ Ալ. Մյասնիկյանի անվ. պետ. ռեսպուբլիկական գրադ., հայ մատենագիտության բաժին, Եր., Հայպետհրատ, (307 էջ):
6. **Աւետիքեան, Գ., Միւրմէլեան Խ., Աւգերեան Մ.,** Նոր բառագիրք հայկազեան լեզուի, Հատոր 2, Ցուցակ 1, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու, 1837, 1067 էջ:

7. **Զարբհանալեան, Գ.** (1895). Պատմութիւն հայկական տպագրութեան սկզբնաւորութենէն մինչ առ մեզ, Վենետիկ, (282 էջ):
8. **Զարդարեան, Վ.** (1910). Յիշատակարան: Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները եւլն. եւլն. 1512-1912 հայկական տպագրութեան 400 ամեայ յոբելեանի առիթով: Գեղարուեստական շքեղ տպագրութեամբ, Կ. Պոլիս, Հատ. 1, (188 էջ):  
URL:<https://books.google.at/books?id=tyPhmBUfzUIC&printsec=frontcover#v=onepage&q&f=false>
9. **Զարդարեան, Վ.** (1911). Յիշատակարան: Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները եւլն. եւլն. 1512-1912 հայկական տպագրութեան 400 ամեայ յոբելեանի առիթով: Գեղարուեստական շքեղ տպագրութեամբ, Կ. Պոլիս, Հատ. 2, (376 էջ):  
URL:<https://books.google.at/books?id=tyPhmBUfzUIC&printsec=frontcover#v=onepage&q&f=false>
10. **Զարդարեան, Վ.** (1912). Յիշատակարան: Հայ երեւելիներու կենսագրութիւնները, լուսանկարները, ձեռագիրները, գրութիւնները եւլն. եւլն. 1512-1912 հայկական տպագրութեան 400 ամեայ յոբելեանի առիթով: Գեղարուեստական շքեղ տպագրութեամբ, Կ. Պոլիս, Հատ. 3, (377-472 էջ):  
URL:<https://books.google.at/books?id=tyPhmBUfzUIC&printsec=frontcover#v=onepage&q&f=false>
11. Զուարթնոց, Ա տարի - Թիւ 2 - 1 Դեկտ. 1937 (Փարիզ), էջ 15 (խմբագրութիւն. «Թեր ու դէմ կարծիքներ «Զուարթնոց»ի հրատարակութեան առթիւ»):
12. **Թեղղիկ** (1912). Տիպ ու տառ: «Գիրեին ծագման եւ միջազգային ու հայկական տպագրութեան վրայ ձգուած ակնարկ մը: Գեղարուեստական տիպ, 180 պատկ. զարդ., Կոնստանդնուպօլիս, տպ. Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան (193, Ա-Ը էջ):
13. **Թեղղիկ** (2012). Տիպ ու տառ (մանահանություն): Հրատ. պատր.՝ Գ. Գասպարեան; Վերջաբ. և ցանկերի հեղ.՝ Վ. Քէշիշեան, Եր., Նաիրի (192, Ա-Ժ, 1-53 էջ):
14. **Իշխանյան, Ռ.** (1977). Հայ գրքի պատմություն, Հատ. 1, Եր., Հայաստան, (535 էջ):
15. **Իշխանյան, Ռ.** (1988). Հայ գիրքը 1512-1800 թվականներին: Հայ հնատիպ գրքի մատենագիտություն, Ն.Ա. Ոսկանյան և այլք, ՀՄՍՀ կուլտ. մինիստր., Ալ. Մյասնիկյանի անվ. ժող. բարեկամ. շքանշանակիր ՀՄՍՀ պետ. գրադ., Հայ գրքի մատենագիտություն; Հատ. Ա, Եր., ՀՄՍՀ Մյասնիկյանի անվ. գրադ., (864 էջ):
16. **Իշխանյան, Ռ.** (2012). Հայ գրքի պատմություն: Հատ. 1, Հրատ. պատրաստ.՝ Ա. Նիկողոսյանը; Առաջաբ.՝ Վ. Դերիկյանի, Եր., Անտարես, (536 էջ):
17. **Լեօ** (1901) Հայկական տպագրութիւն: Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում, Հատ. 1, Թիֆլիս, տպ. Վրաց. հրատ. ընկ., (II-XVI, 451 էջ):
18. **Լեօ** (1902) Հայկական տպագրութիւն: Մեր կեանքը, գրականութիւնը անցեալում, Հտ. 2, Թիֆլիս, տպ. Վրաց. հրատ. ընկ., (VIII-XVI, 610 էջ):
19. **Լևոնյան, Գ.** (1958). Հայ գիրքը և տպագրության արվեստը: Պատմ. տես. սկզբից մինչև XX դարը, Եր., (256 էջ) URL:[https://haygirk.nla.am/upload/1941-/haygirgy\\_tpagrutyan\\_1953.pdf](https://haygirk.nla.am/upload/1941-/haygirgy_tpagrutyan_1953.pdf)

20. **Լևոնյան, Գ.** (2012). Հայ գիրքը և տպագրության արվեստը: Պատմական տեսության սկզբից մինչև XX դարը: Խմբ.՝ Վ. Սարգսյան, Վերահրատ., Եր., Հայաստան (264 էջ):
21. Հայոց լեզուի նոր բառարան(1992). Հ. 1. (Ա-Գ): Կազմ.՝ Տոնիկեան, Փ., Ճերեճեան, Արքեպիսկոպոս Գ., Տեր-Խաչատուրյան, Ա., Պէրոյթ: Կ. Տոնիկեան և որդիք հրատ., (1306 էջ):
22. Հայոց լեզուի նոր բառարան(1968). Աշխատասիր.՝ Արտաշէս Տէր-Խաչատուրեան, Հ. Գանգրունի, Փ. Կ. Տոնիկեան, Պէրոյթ: Կ. Տոնիկեան և որդիք, (924 էջ):
23. **Հովակիմյան Բ.** (2025). Հայոց ծածկանունների բառարան Երեւանի Համալսարանի Հրատարակչություն, Երեւան, 788 էջ:
24. **Ղազարյան, Հ.** (2023). Արտաշէս Տէր-Խաչատուրյան. սփյուռքի մամուլի գիտակը և հանրայնացնողը, Բանբեր Հայաստանի գրադարանների / Bulletin of Armenian Libraries, թիվ 1, էջ 39–43, DOI: <https://doi.org/10.52027/18294685-gha2023.sp>
25. **Ղազիկյան, Ա.** (1909). Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Հտ. 1, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, ( 799 էջ):
26. **Ղազիկյան, Ա.** (1912). Հայկական նոր մատենագիտութիւն և հանրագիտարան հայ կեանքի, Հտտ. 2, Վենետիկ, տպ. Սրբոյն Ղազարու, (803-2079 էջ):
27. Նոր գիր (Եռամսեայ հանդէս Գրականութեան և Արուեստի), Նյու Յորք, ԺԱ. տարի, ձմեռ, 1949-50, Թիւ 4 (52), էջ 247-256:
28. Նոր գիր (Եռամսեայ հանդէս Գրականութեան և Արուեստի), Նյու Յորք, ԺԲ. տարի, գարուն, 1950, Թիւ 1 (47), էջ 47-55:
29. Միոն (հայ ամսագիր), Թ տարի, նոյեմբեր 1935, թիւ 11, էջ 360-362:
30. **Մուքիսայան Ա.** (2009). Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, Երևան, Երևանի Պետական Համալսարան, 1242 էջ:
31. **Մուքիսայան, Գ.** (2013). Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն, Եր., ՀԱԱ հրատ., (160 էջ):
32. **Վարժապետեան, Տ.** (1948). «Շահան Ռ. Պերպերեան (Իր յոբելեանին առիթով)», Հայաստանի կոչնակ, ԽԸ. տարի Յունուար 24, Թիւ 4, էջ 80-82:
33. Տարօն (1950). (Հաւաքածոյ ժողովրդական երգերու): Հաւաքեց և կազմող՝ Ա. Տէր Խաչատուրեան, Պէրոյթ: տպ. Յովեա պուրճ համմուտ, (120 էջ): URL: [https://haygirk.nla.am/upload/1941-/taronA\\_1950.pdf](https://haygirk.nla.am/upload/1941-/taronA_1950.pdf)
34. **Յովհաննէսեան, Կ., խմբ.** (2008). Արտաշէս Տէր Խաչատուրեան 1931-1993: Մարդը և գործը , Պէրոյթ: Վահէ Սէթեան, (334 էջ):
35. **Տօնիկեան, Ա.** (1984). Եփեղու արուեստը: Խմբ. և վերամշակող՝ Ա. Տէր Խաչատուրեան; Լուսանկ.՝ Ֆ. Շիրազ և Հ. Գազանճեան, Հ. Գազանճեան, Պէրոյթ: տպ. Տօնիկեան եղբարք, (400 էջ):
36. **Տէր-Խաչատուրեան, Ա.** (1982). Մահագրութիւն: Հայագիտութեան կորուստներէն, Անթիլիաս: Ա. հատ. (580-605 էջ):
37. **Տէր-Խաչատուրեան, Ա.** (1984ա) Մահագրութիւն հայագիտութեան կորուստներէն, Անթիլիաս: Ա. հատ. (486-520 էջ):

38. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1980ա) Մեղապարտ Յակոբի Մաղմուսարանին հարցը: Հայ գրականությունը օտար լեզուներով: (Գրախօսական), Անթիլիաս: Ա. հատ. (311-354 էջ):
39. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1980բ), Գրախօսականներ եւ մահագրություն, Անթիլիաս: Ա. հ. (361-396 էջ):
40. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1984բ). Դանիել Վարուժանի մատենագիտություն, Անթիլիաս: Ա. հատ. (էջ 521-550):
41. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (2014ա). Հայ գիրքի մատենագիտական գործեր, Պէրյուք: Համազգայինի Վահէ Մէթեան հրատարակչատուն, (422 էջ):
42. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (2014բ). Հայ մամուլի մատենագիտական գործեր, Պէրյուք: Համազգայինի Վահէ Մէթեան հրատարակչատուն, (696 էջ):
43. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1980գ). Հայ մշակութային գանձերու փրկութեան եւ պահպանման հրամայականը, Պէրյուք: տպ. Համազգայինի Վահէ Մէթեան, (20 էջ):
44. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1992). Հայոց լեզուի նոր բառարան(1992). Հ. 2. (Դ-Է), Պէրյուք: Կ. Տոնիկեան եւ որդիք հրատ., ( 1206 էջ):
45. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1969ա). Մատենագիտություն Լեւոն Շանթի: (Օննդեան 100-ամեակին առիթով), Պէրյուք: Ա. հ., (49 էջ):
46. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1977). Մատենագիտություն Ռուբէն Զարդարեանի, Անթիլիաս: տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, (397-445 էջ):
47. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (). Շահան Շահնուրի արխիւէն: Տիրան Զրաքեանի Եգիպտոս այցը: Գրախօսականներ, Անթիլիաս: [Ա. հ.], [Ա. թ.] (477-570):
48. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1969բ). Շահան Ռ. Պէրպէրեան (1891-1956): Կենսագրություն եւ մատենագիտություն, Պէրյուք: Կ. Տոնիկեան եւ որդիք հրատարակչատուն, (106 էջ):
49. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (Ա. թ.). Վաւերաթուղթեր եւ Յ. Օշականի արխիւ, Անթիլիաս: Ա. հատ., ( 284-306 էջ):
50. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1962). Ուղղագրական ուղեցոյց: Նախակրթարաններու եւ երկրորդական վարժարաններու համար, Պէրյուք: տպ. Սեւան, (100 էջ):
51. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1970). Ուղղագրական ուղեցոյց: Նախակրթարաններու եւ երկրորդական վարժարաններու համար, Բ. տպագր. (վերամշակուած եւ ճոխացած), Պէրյուք: տպ. Տոնիկեան, (114 էջ):
52. **Տեր-Խաչատուրեան, Ա.** (1966). Հայ տպագրութեան նախակարապետը՝ Մեղապարտ Յակոբ: Հայ տպագրութեան 450-ամեակին (1512-1962) և Հայ Աստուածաշունչի տպագրութեան 300-ամեակին (1966-1966) առիթով, Անթիլիաս: Ա. հատ., ( էջ):
53. **Քասունի, Ե., խմբ.** (1973). Տարօնի ժողովրդական երգեր: Հավաք.՝ Ա. Տեր Խաչատուրեան, Պէրյուք: տպ. Ատլաս, (179-198) էջ; 25 էջ):
54. **Assmann, Jan.** (1995). “Collective Memory and Cultural Identity.” *New German Critique* 65: p. 125–133.
55. **Assmann, Jan.** (2008). “Communicative and Cultural Memory.” In *Cultural Memory Studies: An International and Interdisciplinary Handbook*, edited by Astrid Erll and Ansgar Nünning, Berlin: Walter de Gruyter, p. 109–118.

56. **Assmann, Jan.** (2011). *Cultural Memory and Early Civilization: Writing, Remembrance, and Political Imagination*. Cambridge: Cambridge University Press, (334 p.), <https://doi.org/10.1017/CBO9780511996306>
57. **Erll, Astrid, and Ansgar Nünning, eds.** (2008). *Cultural Memory Studies: An International and Interdisciplinary Handbook*. Berlin: Walter de Gruyter, (441 p.).
58. **Erll, Astrid.** (2008). "Literature, Film, and the Mediality of Cultural Memory." In *Cultural Memory Studies*, Berlin: Walter de Gruyter, p. 389–398.
59. **Erll, Astrid.** (2011). *Memory in Culture*. Basingstoke: Palgrave Macmillan, (171 p.).
60. **Habermas, Jürgen.** (1989). *The Structural Transformation of the Public Sphere: An Inquiry into a Category of Bourgeois Society*. Translated by Thomas Burger. Cambridge, MA: MIT Press, (301 p.).
61. **Habermas, Jürgen.** (1996). *Between Facts and Norms: Contributions to a Discourse Theory of Law and Democracy*. Cambridge, MA: MIT Press, (676 p.).
62. **Habermas, Jürgen.** (2006). "Political Communication in Media Society: Does Democracy Still Enjoy an Epistemic Dimension?" *Communication Theory* 16 (4), p. 411–426.

### Bibliography (Latin script)

1. **Abrahamyan, A.** (1959). *Hay gri yev grchutyan patmutyun*. Yerevan: Haypethrat. **(In Armenian)**.
2. **Abrahamyan, A.** (2012). *Hay gri yev grchutyan patmutyun*. Ed. N. Yeghiazaryan. Yerevan: Aredit. **(In Armenian)**.
3. Azgayin gradaranum kgortsii Artashes Ter-Khachaturyani anvam anhatakan havakatsun (2020). <https://www.youtube.com/watch?v=CxhGjZOqyR8> **(In Armenian)**.
4. **Ayvazyan, H.** (Ed.). (2015). *Hay gratputyun yev grqarvest: Hanragitaran*. Yerevan: Haykakan Hanragitaran. **(In Armenian)**.
5. **Anasean, H.** (Ed.). (1963). *Hay hnatip grki matenagitakan tsutsak (1512–1800)*. Yerevan: Haypethrat. **(In Armenian)**.
6. **Avetikyan, G., Syurmelian, Kh., Augerian, M.** (1837). *Nor bargirk' haykazyan lezui*. Vol. 2, Tsutsak 1. Venice: Surb Ghazar. **(In Armenian)**
7. **Zarbhanalian, G.** (1895). *Patmutyun haykakan tpagratutyun skzbnavorutyani minch ar mez*. Venice. **(In Armenian)**.
8. **Zardaryan, V.** (1910). *Hishatakaran: Hay erevelineru kensagrutyunner...* Vol. 1. Constantinople. <https://books.google.at/books?id=tyPhmBUfzUIC&printsec=frontcover#v=onepage&q&f=false> **(In Armenian)** .
9. **Zardaryan, V.** (1911). *Hishatakaran: Hay erevelineru kensagrutyunner...* Vol. 2. Constantinople. <https://books.google.at/books?id=tyPhmBUfzUIC&printsec=frontcover#v=onepage&q&f=false> **(In Armenian)**.
10. **Zardaryan, V.** (1912). *Hishatakaran: Hay erevelineru kensagrutyunner...* Vol. 3. Constantinople. <https://books.google.at/books?id=tyPhmBUfzUIC&printsec=frontcover#v=onepage&q&f=false> **(In Armenian)**.
11. *Zvart'nots* (1937). Year A, N 2 (1 December). Paris. **(In Armenian)**.

12. **Teodik** (1912). *Tip u tar*. Constantinople. (In Armenian)
13. **Teodik** (2012). *Tip u tar (nmanahanutyun)*. Ed. G. Gasparyan. Yerevan: Nairi. **(In Armenian)**.
14. **Ishkhanyan, R.** (1977). *Hay grki patmutyun*. Vol. 1. Yerevan: Hayastan. **(In Armenian)**.
15. **Ishkhanyan, R.** (1988). *Hay girky 1512–1800 t'vakannerin: Hay hnatip grki matenagitutyun*. Yerevan. **(In Armenian)**.
16. **Ishkhanyan, R.** (2012). *Hay grki patmutyun*. Vol. 1. Yerevan: Antares. **(In Armenian)**.
17. **Leo** (1901). *Haykakan tpagratut 'yun: Mer kyank'y, grakanutyuny antsyalum*. Vol. 1. Tiflis. **(In Armenian)**.
18. **Leo** (1902). *Haykakan tpagratut 'yun: Mer kyank'y, grakanutyuny antsyalum*. Vol. 2. Tiflis. **(In Armenian)**.
19. **Levonyan, G.** (1958). *Hay girky yev tpagratutyun arvesty*. Yerevan. [https://haygirk.nla.am/upload/1941-/haygirqy\\_tpagrutyan\\_1953.pdf](https://haygirk.nla.am/upload/1941-/haygirqy_tpagrutyan_1953.pdf) **(In Armenian)**.
20. **Levonyan, G.** (2012). *Hay girky yev tpagratutyun arvesty*. Yerevan: Hayastan. **(In Armenian)**.
21. *Hayots lezui nor bararan*. (1992). Vol. 1 (A–G). Comp. P. Tonikyan, Archbishop G. Jerejian, A. Ter-Khachaturyan. Beirut: K. Tonikyan yev vordik. **(In Armenian)**.
22. *Hayots lezui nor bararan*. (1968). Comp. A. Ter-Khachaturyan, H. Gangruni, P. K. Tonikyan. Beirut: K. Tonikyan yev vordik. (In Armenian)
23. **Ghazaryan, H.** (2023). *Artashes Ter-Khachaturyan: spyurki mamuli gitaky yev hanraynatsnogy. Banber Hayastani gradaranneri / Bulletin of Armenian Libraries*, No. 1. <https://doi.org/10.52027/18294685-gha2023.sp> **(In Armenian)**
24. **Ghazikan, A.** (1909). *Haykakan nor matenagitut 'yun yev hanragitaran hay kyanki*. Vol. 1. Venice: Surb Ghazar. **(In Armenian)**.
25. **Ghazikan, A.** (1912). *Haykakan nor matenagitut 'yun yev hanragitaran hay kyanki*. Vol. 2. Venice: Surb Ghazar. **(In Armenian)**.
26. *Nor gir* (1949–1950). Year XI, N. 4 (Winter). New York. **(In Armenian)**.
27. *Nor gir* (1950). Year XII, No. 1 (Spring). New York. **(In Armenian)**.
28. *Sion* (1935). Year T, No. 11 (November). **(In Armenian)**
29. **Sukiasyan, A.** (2009). *Hayots lezvi homanishneri batsatrakan bararan*. Yerevan: Yerevani Petakan Hamalsaran. **(In Armenian)**.
30. **Sukiasyan, G.** (2013). *Grkagitut 'yun yev hay gratputyun patmagrut 'yun*. Yerevan: HAA. **(In Armenian)**.
31. **Varzhapetian, T.** (1948). *Shahan R. Berberyan (ir hobeleanin aritov). Hayastani kochnak*, Year KhB, N. 4 (24 January). **(In Armenian)**.
32. **Taron** (1950). *Havaqats 'oy zhoghovrdakan yergeru*. Comp. A. Ter-Khachaturyan. Beirut. [https://haygirk.nla.am/upload/1941-/taronA\\_1950.pdf](https://haygirk.nla.am/upload/1941-/taronA_1950.pdf) **(In Armenian)**.
33. **Hovakimyan, B.** (2005). *Hayots tsatskanunneri bararan*. Yerevan: Yerevani Hamalsarani Hratarakchutyun. **(In Armenian)**.
34. **Hovhannesyanyan, K.** (Ed.). (2008). *Artashes Ter-Khachaturyan 1931–1993: Mardy yev gortsy*. Beirut: Vahe Setyan. **(In Armenian)**.
35. **Tonikyan, A.** (1984). *Yephelu arveste*. Ed. and rev. A. Ter-Khachaturyan. Beirut: Tonikyan yeghbayrk. **(In Armenian)**.
36. **Ter-Khachaturyan, A.** (1982). *Mahagrut 'yun: Hayagitut 'yan korustneren*. Antelias. **(In Armenian)**.
37. **Ter-Khachaturyan, A.** (1984a). *Mahagrut 'yun hayagitut 'yan korustneren*. Antelias. **(In Armenian)**.

38. **Ter-Khachaturyan, A.** (1980a). *Meghapart Hakobi Saghmosarani hartsy: Hay grakanut'yuny otar lezunerov (grakhosakan)*. Antelias. **(In Armenian)**.
39. **Ter-Khachaturyan, A.** (1980b). *Grakhosakanner yev mahagrut'yun*. Antelias. **(In Armenian)**.
40. **Ter-Khachaturyan, A.** (1984b). *Daniel Varuzhani matenagitut'yun*. Antelias. **(In Armenian)**.
41. **Ter-Khachaturyan, A.** (2014a). *Hay girki matenagitakan gorcer*. Beirut: Hamazkayin Vahe Setyan. **(In Armenian)**.
42. **Ter-Khachaturyan, A.** (2014b). *Hay mamuli matenagitakan gorcer*. Beirut: Hamazkayin Vahe Setyan. **(In Armenian)**.
43. **Ter-Khachaturyan, A.** (1980c). *Hay mshakut'ayin gandzeru prkutyun yev pahpanman hramayakan*. Beirut: Vahe Setyan. **(In Armenian)**.
44. **Ter-Khachaturyan, A.** (1992). *Hayots lezui nor bararan*. Vol. 2 (D–E). Beirut: K. Tonikyan yev vordik. **(In Armenian)**.
45. **Ter-Khachaturyan, A.** (1969a). *Matenagitut'yun Levon Shanti (tsnndyan 100-amyakin aritov)*. Beirut. **(In Armenian)**.
46. **Ter-Khachaturyan, A.** (1977). *Matenagitut'yun Ruben Zardaryani*. Antelias: Kat'oghikosut'yan Hayots Metsi Tann Kilikioy. **(In Armenian)**.
47. **Ter-Khachaturyan, A.** (n.d.). *Shahan Shahnuri arkhiven: Tiran Chrak'yan Yegiptos aytsy. Grakhosakanner*. Antelias. **(In Armenian)**
48. **Ter-Khachaturyan, A.** (1969b). *Shahan R. Berberyan (1891–1956): Kensagrut'yun yev matenagitut'yun*. Beirut: K. Tonikyan yev vordik. **(In Armenian)**
49. **Ter-Khachaturyan, A.** (n.d.). *Vaveratughter yev H. Oshakani arkhiv*. Antelias. **(In Armenian)**
50. **Ter-Khachaturyan, A.** (1962). *Ughghagrakan ughets'uyts: Nakhakrtaranneru yev yerkrordakan varjaranneru hamar*. Beirut: Sevan. **(In Armenian)**.
51. **Ter-Khachaturyan, A.** (1970). *Ughghagrakan ughets'uyts: Nakhakrtaranneru yev yerkrordakan varjaranneru hamar (2nd ed.)*. Beirut: Tonikyan. **(In Armenian)**.
52. **Ter-Khachaturyan, A.** (1966). *Hay tpagratut'yan nakhhararpet'e Melapart Hakob*. Antelias. **(In Armenian)**.
53. **Kasuni, E.** (Ed.). (1973). *Taroni zhoghovrdakan yerger*. Comp. A. Ter-Khachaturyan. Beirut: Atlas. **(In Armenian)**.